Azg
armenian daily

26 ՅՈՒՆՈՒԱՐ 2000 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ 12 (1980)

Պուտին-Քոչարյան հանդիպում Կրեմլում

ՄՈՍԿՎԱ, 25 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հունվարի 25-ի երեկոյան Կրեմլում տեղի ունեցավ ՌԴ նախագահի պաշտոնակատար Վլադիմիր Պուտինի հանդիպումը Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ: Ինչպես հայտնի է դարձել լրագրողներին, հանդիպման ժամանակ քննարկվել են երկկողմ տնտեսական համագործակցության հարցեր: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի, բացառված չէ նաեւ, որ հանդիպման մասնակիցներն արծարծած լինեն ղարաբաղյան հակամարտության հիմնախնդիրը:

Դաշնային ուժերն ընդհուպ մոտեցել են Գրոզնու կենտրոնին

ՄՈԶԴՈԿ, 25 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ: Այսօրվա մարտերի ընթացքում դաշնային ուժերը շարունակում էին առաջանալ դեպի քաղաքի կենտրոն, տիրացան «Մինուտկա» հրապարակի շրջանում գտնվող կինոթատրոնին: Մարտանցելով Սունժա գետը, նրանք նաեւ նպաստավոր բնագիծ գրավեցին քաղաքի Լենինյան շրջանի մասնավոր հատվածում: Այդ մասին ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին հաղորդեցին Հյուսիսային Կովկասում գտնվող դաշնային զորքերի միացյալ խմբավորման մամլո ծառայությունում:

ՄՈՍԿՎԱ

Կովկասը բարդ տարածաշրջան է

Ավարտվեց ԱՊՀ գագաթաժողովը

ՄՈՍԿՎԱ, 25 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ: Ռուսաստանի համար «ԱՊՀ-ի երկրների հետ համագործակցությունը եղել է, կա ու կլինի բացարձակ գերակայություն»: Այդ մասին հայտարարեց Ռուսաստանի նախագահի պաշտոնակատար Վլադիմիր Պուտինը մամլո ասուլիսում, որը նվիրված էր ԱՊՀ-ի պետությունների ղեկավարների խորհրդի այսօր այստեղ կայացած նիստի արդյունքներին:

Վլադիմիր Պուտինը նշեց, որ ներկայիս հանդիպման ժամանակ համագործակցության ղեկավարներին հաջողվեց «առաջ ընթանալ մեր համագործակցության սկզբունքային հիմունքները հասկանալու ասպարեզում»: «Երբ ԱՊՀ-ն ստեղծվում էր, ասաց նախագահի պաշտոնակատարը, շատերը այն դիտում էին որպես նախկին ԽՍՀՄ-ի մնացուկ, որպես մի գոյացություն, որն առաջացել էր աղամիասնացման երկյուղների հետեւանքով: Բայց այսօր պարզ է, որ հետխորհրդային տարածությունում գոյացել են անկախ պետություններ, եւ այժմ փոխվում է ԱՊՀ-ի բուն դերը»:

Ռուսաստանի նախագահի պաշտոնակատարի կարծիքով, ԱՊՀ-ն պետք է դառնա «մի մեխանիզմ, որը հնարավորություն կընձեռի պահպանել այն ամենայն լավը, ինչ եղել է, իսկ դրա կարիքը կա»:

Տես էջ 8

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Ամենայն հայոց կաթողիկոսը վերադարձավ Սուրբ Էջմիածին

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ, 25 ՀՈՒՆՎԱՐ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը, ավարտելով ուխտագնացությունը տերունական սրբավայրեր, հունվարի 25-ին վերադարձավ Մայր աթոռ Սբ. Էջմիածին:

Երեւանի «Զվարթնոց» օդանավակայանում Վեհափառ հայրապետին դիմավորեցին Հայաստանի Հանրապետության Կրոնի գործերի պետական խորհրդի նախագահի պաշտոնակատար Լեւոն Մկրտչյանը, Հայաստանյայց Առաքելական եկեղեցու թեմակալ առաջնորդներ, Մայր աթոռի միաբանության անդամները:

Մայր տաճարում Իջման սբ. սեղանի առջեւ Վեհափառ հայրապետի վերադարձը ողջունեց Սբ. Էջմիածնի լուսարարապետ գեր. Տ. Հուսիկ արք. Սանթուրյանը:

«Առաջին մեր ուղերձությունը արտասահման, որ եղավ ուխտագնացություն սուրբ երկիր, տերունական սուրբ վայրեր՝ բարեհաջող, խանդավառող ու գոտեմարտող ընթացք ունեցավ, եւ այսօր գոհունակ սրտով մեր աղոթքն ենք հղում առ Աստված մեր եկեղեցու շինության, մեր ժողովրդի բարօրության, մեր նվիրապետական աթոռների պայծառացման եւ զորացման համար», ասաց Վեհափառ հայրապետը՝ այցելության մասին իր տպավորությունները հաղորդելով ներկաներին:

Ուխտագնացության ընթացքում Վեհափառ հայրապետն եղավ Հորդանանում եւ Երուսաղեմում, այցելեց տերունական բոլոր սրբավայրերը, Երուսաղեմում Հուլյան տոմարով հանդիսապետեց Սբ. Ծննդյան արարողությունները, որին ներկա գտնվեց նաեւ ՀՀ նախագահը:

Այցի ընթացքում Ամենայն Հայոց կաթողիկոսն ունեցավ նաեւ մի շարք պաշտոնական եւ էկումենիկ հանդիպումներ: Ամենայն Հայոց կաթողիկոսին հանդիպելու եւ հայրապետական պատգամն ունկնդրելու զանազան առիթներ ունեցան հայ համայնքն ու տարբեր երկրներից ժամանած հայ ուխտավորները:

ՄՍՍԼՈ ԴԻՎԱՆ

Նախագահի հրաժարականի մասին հայտարարությունները զուտ քաղաքական բնույթի են

Հայտարարեց ՀՌԱԿ ատենապետը

ԵՐԵՎԱՆ, 25 ՀՈՒՆՎԱՐ, ՏՆԱՐՔ: Ցանկացած կուսակցություն կամ քաղաքական գործիչ իրավունք ունի պահանջելու վաղաժամկետ նախագահական կամ խորհրդարանական ընտրություններ, սակայն այդ հայտարարությունները առկա պայմաններում զուտ քաղաքական բնույթ են կրում եւ ոչ թե սահմանադրական: Սնարի թղթակցի հետ հարցազրույցում Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության ատենապետ Ռուբեն Միրզախանյանն այսպես մեկնաբանեց մի շարք քաղաքական գործիչների հայտարարությունները, որոնք պահանջում են Ռոբերտ Քոչարյանի հրաժարականը:

ՀՌԱԿ-ի նախագահի կարծիքով, այժմ ամենեւին էլ վաղաժամկետ ընտրությունների ժամանակը չէ, այդ թվում նաեւ նախագահական: Միեւնույն ժամանակ Միրզախանյանը բացառեց իրադարձությունների հակասահմանադրական զարգացումը, որը, նրա կարծիքով, «կհանգեցնի քաոսի եւ պետության համար ողբերգական հետեւանքների»:

Երբ երկիրը թալանում է, անմիջապես հայտնվում են «երաշխավորները»

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հունվարի 24-ի երեկոյան մոսկովյան հեռուստաալիքներն անթաքույց հաճույքով ցուցադրում էին Կրեմլի գրադարանում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներ Քոչարյանի ու Ալիեւի հանդիպման տեսանյութերը: Թե ի՞նչ էին խոսել երկու նախագահներն ամբողջ մեկ ժամ՝ նրանց չէր հետաքրքրում, ասենք՝ չէին էլ կարող իմանալ: Բայց ահա այն, որ բանակցողներին միացել էր Ռուսաստանի նախագահի պաշտոնակատար Վլադիմիր Պուտինը, որը եւս 40 րոպե մասնակցել էր կողմերի զրույցին (աթոռն առավ, եկավ նստեց երկուսի մեջտեղում), որից հետո հանդես եկավ կարճ հայտարարությամբ, հատուկ ընդգծում էին: Հայաստանյան պատվիրակության հետ Մոսկվա մեկնած «Ազգի» թղթակից Լիլիթ Պողոսյանի ուղարկած նյութն արդեն տպագրել ենք, ուր մանրացույց է արվում Պուտինի այդ կարճ ելույթի «աղը»: «Ռուսաստանը պատրաստ է ստանձնել ձեռք բերված համաձայնությունների երաշխավորի դերակատարությունը»:

Ուշադրություն դարձրեք՝ Պուտինը «համեստորեն» պատրաստվում է ստանձնել մի դերակատարություն, որը նրանից... ոչ ոք չի խնդրել: Այլապես կասեր, թե ընդունում է կողմերից մեկի կամ մյուսի, կամ էլ հենց երկուսի համատեղ խնդրանքը: Սա արդեն պարզ բարյացակամություն չէ Ռուսաստանի «ավանդական բարեկամների» նկատմամբ, ավելին է՝ տարածաշրջանում իր քաղաքականության ակտիվացման, ոչ միայն դարաբաղյան հիմնահարցի կարգավորման, այլեւ անդրկովկասյան գործերին ուղղակի միջամտության հայտարարություն: Քանզի դիվանագիտական լեզվով «միջնորդն» այլ բան է, «երաշխավորը»՝ միանգամայն այլ:

Տես էջ 3

Իգոր Իվանով. Սկզբունքորեն կարեւոր է, որ ղեկավարները քննարկում են կովկասյան խնդիրները

ՄՈՍԿՎԱ, 25 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Սկզբունքորեն կարեւոր է», որ Ռուսաստանի, Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի ղեկավարները հանդիպում եւ քննարկում են կովկասյան տարածաշրջանի խնդիրները: Այս մասին հայտարարել է ՌԴ արտաքին գործերի նախարար Իգոր Իվանովը՝ պատասխանելով լրագրողների հարցերին ԱՊՀ ԱԳՆ ղեկավարների խորհրդի նիստի ավարտից հետո: Եթե խոսելու լինենք Կովկասում կայունության եւ անվտանգության մասին, «ապա դա ներառում է ամբողջ տարածաշրջանը եւ անհրաժեշտ է փնտրել բոլոր հակամարտությունների կարգավորումը, որ այդ տարածքում այսօր առկա են», ասել է Ի. Իվանովը: Նա նշել է, որ այդ հանդիպման արդյունքների առնչությամբ «մենք կկարողանանք մանրամասն տեղեկացնել հնարավոր պայմանավորվածությունների եւ բովանդակության մասին» Կովկասի խնդիրների առնչությամբ:

Հանդիպմանը քննարկվում են չորս երկրների իրավապահ գերատեսչությունների եւ հատուկ ծառայությունների բազմակողմ եւ երկկողմ փոխգործունեությունը, տարածաշրջանային անվտանգության խնդիրները, սահմանապահ ծառայությունների փոխգործունեությունը: «Քառյակի» հանդիպման մասնակիցներն իրենց առջեւ խնդիր չեն դնում ստորագրել որեւէ փաստաթուղթ՝ իրենց գլխավոր խնդիրը համարելով բոլոր պետությունների դիրքերը պարզելը:

Երեւան ժամանեց ԱՄՆ պետքարտուղարի խորհրդական Բիլ Թեյլորը

ԵՐԵՎԱՆ, 25 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հունվարի 25-ին եռօրյա այցով Հայաստան է ժամանել ԱՄՆ պետքարտուղարի ԱՊՀ երկրներին տրամադրվող օգնության գծով խորհրդական Բիլ Թեյլորը: Այցի շրջանակներում նախատեսվում է Հայաստանի հետ համագործակցության հոչակագրի վավերացում: ՀՀ-ում ԱՄՆ դեսպանությունում հայտնեցին, որ նախատեսվում են պրն. Թեյլորի հանդիպումները ՀՀ նախագահի, Ազգ նախագահի, վարչապետի, նախարարների հետ: Հունվարի 28-ին Բիլ Թեյլորը կմեկնի Հայաստանից:

Ահա այն երջանիկ ընտանիքը, որը

«ԽՈՇՈՐ ՇԱՀՈՒՄ»

վիճակախաղով շահել է Հայաստանի պատմության մեջ

ԱՄԵՆԱԽՈՇՈՐ

35 միանվագ գումարը՝ ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ:

Քիզիկոս Հարություն Սարգսյանի եւ հայոց լեզվի ուսուցչուհի Արուսյակի ընտանիքը հայտնեց, որ մինչ օրս երեխաների հետ աղտում էր նկուղային բնակարանում: Փաստորեն 500 դրամով նրանց ընտանիքը նկուղից կարող է տեղափոխվել առանձնատուն:

ԱԶԳ

ՈՒՂՂԱԳԻԾ

ԻՐԱՎԻՃԱԿ

Սահմանադրությունը չփոխել իրադրությունից ելնելով

Քաղաքական ուժերը եւ պետական կառույցները յուրովի համակարծիք են

Այսօր Աժ խոսնակ Արմեն Խաչատրյանի ստորագրությամբ խորհրդարանի ոչ-պատգամավորական հանձնաժողովում է գտնվում սահմանադրական փոփոխությունների միայն մեկ օրենսդրական նախաձեռնություն, որը ստորագրված է ՀԿԿ խմբակցության անդամներ Պերճ Բոնաղյանի, Գագիկ Թադեւոսյանի, Ֆրունզե Խաչատյանի, Յու. Մանուկյանի եւ Հրանտ Ոսկանյանի կողմից: Համաձայն Աժ կանոնակարգի, ոչ-պատգամավորական գլխադասային հանձնաժողովը ոչ-տ է մեկ ամսվա ընթացքում եզրակացություն տա օրենսդրական այս նախաձեռնությունն Աժ մեծ օրակարգում եւ ապա եռօրյայի օրակարգում ընդգրկելու վերաբերյալ. «Ազգին» հայտնեց Աժ ոչ-պատգամավորական հանձնաժողովի նախագահ Վիկտոր Դալլաքյանը: Նա ընդգծեց, որ «Միասնություն» խմբակցության կողմից հանրաքվեի դնելու առաջարկությամբ սահմանադրական փոփոխությունների նախագիծ դեռեւս չի ներկայացված: Սակայն «Միասնությունը» Աժ իրավական ծառայության ղեկավար Վլադիմիր Նազարյանի ղեկավարությամբ իր ներսում կազմավորել է աշխատանքային խումբ, որը պատրաստվում է ամբողջացնել «Հանրաքեւական» կուսակցության, ՀԺԿ-ի եւ «Երկրապահի» դիրքորոշումները գործող Սահմանադրության առաջնահերթ բարեփոխման ենթակա հոդվածների շուրջ: Վ. Դալլաքյանը նշեց, որ ներքին ճգնում կա մայիսին ավարտելու սահմանադրական փոփոխությունների քննարկումը, եւ զուտ ժամանակի ու ընթացակարգի տեսանկյունից դա հնարավոր է: Եթե «Միասնությունն» արագացնի իր աշխատանքները, ապա մարտին հնարավոր կլինի սահմանադրական հանրաքվե կազմակերպելու օրենքի նախագծերը երեք ընթերցումների միջոցով քննարկել խորհրդարանում: Ընդ որում, պայմանավորվածություն կա, որ առաջնահերթ են Աժ-ին, հանրաքեւության նախագահին եւ կառավարությանը վերաբերող գլուխներում իրականացվող փոփոխությունները: Դասաիրավական համակարգին, տարածքային կառավարմանն ու տեղական ինքնակառավարմանը նվիրված սահմանադրական օրկումները կնշակվեն եւ կքննարկվեն ավելի ուշ: Այս պահի դրությամբ, ըստ Վ. Դալլաքյանի, խորհրդարանի խնդիրն է մեծացնել Աժ լիազորությունները հանրաքեւության վարչապետի նշանակման գործում, ինչպես նաեւ ընդգծել վարչապետի դերակատարումը կառավարության նիստերը հրավիրելու, կառավարության որոշումները հաստատելու գործընթացում: Ներկա Սահմանադրությամբ, հանրապետության նախագահն է հրավիրում կառավարության նիստերը եւ վավերացնում որոշումները: Պետք է առաջնահերթ փոփոխվի նաեւ նախագահի կողմից Աժ լուծարմանը վերաբերող հոդվածը առավել բարդացնելով այս քայլը, որպեսզի զուգակշիռներ ստեղծվեն իշխանության տարբեր թեւերի միջեւ՝ օրենսդիր եւ գործադիր:

Ընդունելի թեկնածուի բացակայությունը թելադրում է իր խաղը

Քաղաքական տարբեր շրջանակների հետ զրույցները, սակայն, վկայում են, որ այսօր նույն այդ սահմանադրական բարեփոխումների մասին խոսող կուսակցությունների հիմնական մեծամասնությունը չի ցանկանում թաղես սրբագրել գործող օրենքը բացառությամբ Կոմկուսի, որը պատրաստ է մինչեւ վերջ հիմնավորել խորհրդարանական հանրաքեւության իր նախընտրած տարբերակը: Կոմկուսի դիրքորոշումն այս հարցում պարզ է. ՀԿԿ-ն չունի համախմբող առաջնորդ, այդպիսի հոգեհարազատ գործչի ասպարեզում եւս չի տեսնում, ուստի առաջարկում է սահմանադրական հիմնական լիազորություններով օժտել խորհրդարանին, որն էլ կընտրի հանրաքեւության նախագահին եւ փաստացի կուղղորդի գործադիր իշխանությունը:

«Միասնություն» խմբակցությունը, որն առաջինը պաշտպանեց սահմանադրական արագ փոփոխությունների տարբերակը, այսօր արդեն վերանայում է նախնական գաղափարը վկայակոչելով ազդեցիկ փաստարկ. իրադրությունից ելնելով, չի կարելի փոխել Սահմանադրությունը: ՀԺԿ ղեկավարությունը միանշանակ դեմ է նախագահի լիազորությունների նվազեցմանը: Մեզ հետ զրույցում ՀԺԿ ղեկավարության շատ անդամներ նշեցին, որ անթույլատրելի է նախագահի դիրքի թուլացումը եւ նրա վերածումը անգլիական թագուհու: «Հանրաքեւական» կուսակցությունը եւս չի վերահաստատում նախագահի լիազորությունների կտրուկ սահմանափակման իր որոշ անդամների արտահայտած մտքերը: Շան գլուխը թաղված է հետեւյալում. կուսակցությունները, հատկապես Աժ-ում քաղաքական մեծամասնություն հանդիսացող ուժը, որն իշխանության հենարանն է, դեռեւս չի կորցրել իր հույսը գտնելու նախագահի իր թեկնածուին: Այս պահին փոխադարձ ընդունելի թեկնածու չունի ոչ ՀՀԿ-ն, ոչ ՀԺԿ-ն, ոչ էլ «Երկրապահը»: Սակայն հատկապես ՀԺԿ շրջանակներում հաստատվում է Ստեփան Դեմիրճյանին որպես կի ժամանակ անց խարիզմատիկ առաջնորդ, այսինքն նախագահի թեկնածու դարձնելու մտադրությունը: Այս գաղափարն արդեն դրվել է շրջանառության մեջ, եւ ստուգվում է նաեւ որքանով է բարեբեր հողը մտադրության իրականացման համար: Ուստի քաղաքական մեծամասնություն հանդիսացող ուժերն արդեն չեն շտապում պարտադիր մայիսին ավարտելու հանրաքվեում դրվելիք սահմանադրական բարեփոխումների նախագիծը: Նրանք պատրաստ են բավարարվել թեթեւակի շտկումներով, գործնական Աժ-ն լուծարելու հոդվածի բարդացումը, վարչապետին ընձեռվելիք որոշ լիազորություններ նիստ հրավիրել, որոշումներ վավերացնել: Նախագահական, ավելի որոշակի՝ կիսանախագահական հանրապետության կառույցը գայթակղում է շատերին:

Այս դաշտում գրեթե նույնն են խնդիրները նաեւ ԱԺՄ-ի համար, թեեւ ԱԺՄ-ն ավանդաբար հայտնի է իբրեւ խորհրդարանական հանրապետության կողմնակից: Սակայն ներկա պահին ԱԺՄ-ն միակն է, որ ունի նախագահի թեկնածու՝ ԱԺՄ նախագահ Վազգեն Մանուկյանը, ուստի ԱԺՄ-ն եւս շահագրգիռ չէ Սահմանադրության արագ փոփոխության գաղափարով եւ հատկապես նախագահի լիազորությունների սահմանափակմամբ:

Կարող ենք եզրակացնել, որ տեւական ժամանակ վաղաժամկետ նախագահական ընտրությունների մասին Հայաստանում խոսք չի լինի, կուսակցությունները եւ նույն պետական կառույցները պատրաստ չեն դրան: «Միասնությունը» տվյալ պահին մարտավարական շահերի ընդհանրություն ունի նախագահ Ռոբերտ Քոչարյան հետ, որովհետեւ կուսակցությունները հասկանում են, որ փոխընդունելի թեկնածուի բացակայության պարագայում վաղաժամկետ նախագահական ցանկացած ընտրություն ուղղակի կհանգեցնի խորհրդարանի արտահերթ ընտրությունների, որի արդյունքում իրենք կարող են կորցնել մեծամասնություն լինելու՝ կարգավիճակը, այսինքն իշխանությունը:

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

«Արմենիկումը» մարտին կընդունի առաջին հիվանդներին

ԵՐԵՎԱՆ, 25 ՅՈՒՆՎԱՐ, ՍՆԱՐՔ 2000 թվականի մարտին կլինիկական փորձարկումների «Արմենիկում» նոր կենտրոնը, որի բացումը տեղի է ունեցել Երեւանում դեկտեմբերի 10-ին, կընդունի իր առաջին հիվանդներին: Այդ մասին հաղորդեց «Արմենիկում» լրատվավերլուծական կենտրոնի ղեկավար Դավիթ Ասլանյանը:

Նրա խոսքերով, փետրվարի կեսերին կլինիկական կստանա ԴԱՎ-ի եւ նրան ուղեկից հիվանդությունների բուժման համար անհրաժեշտ սարքավորումների մնացած մասը: Մինչ այդ կլուծվեն նաեւ մյուս տեխնիկական եւ կազմակերպչական խնդիրները:

Հիվանդանոցը նախատեսված է 52 տեղի համար: Հայաստանի քաղաքացիներին ծրագրվում է բուժել կամ լուրջ զեղչերով, կամ բոլորովին անվճար, նշեց Ասլանյանը: «Ես կարծում եմ, որ մեր հայրենակիցներին ԴԱՎ-ից բուժելու համար անհրաժեշտ ոչ-տ պետք կստեղծվի, քանի որ պետությունը կարեւոր դեր է խաղում այդ նախագծում», ասաց Ասլանյանը: Նա ավելացրեց, որ կլինիկական փորձարկումների առաջին փուլը, որի ընթացքում բուժումն անվճար է, արդեն ավարտվել է: Ներկայումս բուժում ստացել են արդեն 153 հիվանդներ, որոնցից 15-16-ը 2000 թվականի սկզբում կշարունակեն բուժումը:

Ա. Բլեյանը հացադուլ է հայտարարում

ԵՐԵՎԱՆ, 25 ՅՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հունվարի 25-ին մայրաքաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքների առաջին ատյանի դատարանը՝ դատավոր Իսկուհի Վարդանյանի նախագահությամբ, շարունակեց «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի տնօրեն, «Նոր ուղի» կուսակցության նախագահ Աշոտ Բլեյանի, կրթահամալիրի հաշվապահ Ռիմա Պողոսյանի, գանձապահ Սիդա Ավակովայի դեմ հարուցված քրեական գործի դատաքննությունը:

Այսօրվա նիստը հետաձգվեց՝ կապված Ա. Բլեյանի փաստաբան Ռոբերտ Գրիգորյանի՝ դատարանին ներկայացրած միջնորդության հետ. «Դաստակերտ 95» ծրագրին առնչվող դրվագով որոշ անձինք արդեն դատապարտվել են ազատազրկման: Բլեյանը եւս մեղադրվում է նույն դրվագով, մինչդեռ՝ դրանով քրեական գործ չի հարուցվել:

Նիստի հետաձգման մեջ տեսնելով քաղաքականացման միտում, ամբաստանյալը ցանկացավ հանել իր պաշտպանի միջնորդությունը՝ նիստը շարունակելու նպատակով, ինչը մերժվեց դատավորի կողմից: Նա ասաց, որ հետագայում փաստաբանի ներկայացրած միջնորդության մանրամասների հիմնավորումները լուրջ քննարկման կարժանանան:

Նիստի ընթացքում Ա. Բլեյանը միաժամանակ ցանկանում էր իր համար ճշտել թե, ի վերջո, ով է իր պետական մեղադրողը, քանի որ այս գործում նրանք երեքն են: Նա նաեւ հայտարարություն արեց՝ դատավորի անաչառության եւ ստեղծված անհավասար պայմանների վերաբերյալ: Նիստի վերջում Ա. Բլեյանը հայտարարեց, որ հացադուլ է սկսում:

Դատաքննությունը կշարունակվի հունվարի 31-ին:

ՀԱՄԱՌՈՏ

Ադրբեջանում պահվող հայ գերիները մեր օգնությունն են ակնկալում

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 25 ՅՈՒՆՎԱՐ, ՍՆԱՐՔ: Ղարաբաղյան պատերազմի ամենածանր հետեւանքներից մեկն անհետ կորածներն են: Դժբախտաբար, նրանց որոնումներն այնքան էլ արդյունավետ չեն: Փորձագետների կարծիքով, դրա գլխավոր պատճառը Լեռնային Ղարաբաղի հետ պատշաճաչափ համագործակցելուց ադրբեջանական կողմի հրաժարվելն է: Բաքվի կարծիքով, Ղարաբաղի ռազմագերիների, պատանդների եւ անհետ կորածների հարցերով զբաղվող պետական հանձնաժողովի հետ շփումները կնշանակեն ԼՂՀ անկախության անուղղակի ճանաչում: Որպես հետեւանք՝ բացակայում է ռազմագերիների եւ անհետ կորածների որոնման հստակ մեթոդիկան:

Մինչդեռ, Ղարաբաղի իրավապաշտպան Կարեն Օհանջանյանի ասելով, Ադրբեջանի բանտերում, ճամբարներում եւ հոգեբուժարաններում շարունակում են տառապել հայազգի ռազմագերիներ ու պատանդներ: Մինչ օրս անհետ կորածների հարազատներն ու մերձավորները նրանց ճակատագրի վերաբերյալ որեւէ լուր ստանալու հույսը չեն կորցնում: Շուրջ մեկուկես տարի առաջ Ստեփանակերտում ստեղծվեց «Անհետ կորածների ազգականների միություն», որը որոնմանը զուգընթաց բարոյական եւ նյութական աջակցություն է ցույց տալիս անհետ կորածների ազգականներին: Միության նախաձեռնությամբ ԼՂՀ-ում հունիսի 29-ը հռչակվել է Անհետ կորածների օր:

Վերջերս Միության նախագահ Վերա Գրիգորյանը նամակ է հղել Հայաստանի նախագահի տիկնոջը՝ Բելա Քոչարյանին, որում կազմակերպության անունից Հայաստանի առաջին տիկնոջը խնդրում է օգտագործել իր հեղինակությունն ու ազդեցությունը ադրբեջանական բանտերում տառապող իրենց որդիների, ամուսինների ու եղբայրների ազատ արձակման գործում:

ԼՂՀ եւ ՀՀ իշխանությունների հետ մեկտեղ Միության գործունեությանն աջակցում են հասարակական կազմակերպություններ, ձեռնարկություններ ու հիմնարկներ: Այդ գործում իրենց ավանդը ներդնել ցանկացողներին հաղորդում ենք «Անհետ կորածների ազգականների միության» հաշվեհամարը. ԼՂՀ, «Արցախբանկ» ազգային բանկ, 1011780:

Նոր օրենսգրքով մահապատժի փոխարեն նախատեսվում է ցմահ բանտարկություն

ԵՐԵՎԱՆ, 25 ՅՈՒՆՎԱՐ, ՍՆԱՐՔ: Ներկայումս Հայաստանում 32 մարդ դատապարտված է գնդակահարության: Սակայն 1991 թվականին երկրի նախագահի հրամանագրով մտցված մահապատժի սահմանափակմանը համապատասխան, ոչ մի մահապատիժ ի կատար չի ածվել: Այդ մասին հաղորդեց Հայաստանի Ազգային ժողովի պետական հարցերի հանձնաժողովի նախագահ Վիկտոր Դալլաքյանը:

Նա հաղորդեց, որ նոր Քրեական օրենսգրքում, որը երրորդ եւ վերջին ընթերցմամբ կքննարկվի եւ կընդունվի երկրի խորհրդարանի գարնանային նստաշրջանում, նախատեսվում է մահապատժի փոխարինում ցմահ բանտարկությամբ: Սակայն այդ նախաձեռնությունն ունի ինչպես կողմնակիցներ, այնպես էլ հակառակորդներ, նշեց խորհրդարանականը: Մասնավորապես, մահապատիժը վերացնելու հակառակորդները հարց են բարձրացնում այն մասին, որ ներկայումս Հայաստանը հնարավորություն չունի եվրոպական չափանիշներին համապատասխանող պայմաններ ապահովել մահապատժի դատապարտվածների համար:

Ինքը՝ Վիկտոր Դալլաքյանը, հայտնելով իր կարծիքը մահապատիժը վերացնելու հարցի վերաբերյալ, հաշվի առնելով ազգային հոգեբանության եւ մենթալիտետի առանձնահատկությունները, չբացառեց, որ մահապատժի վերացումը կարող է հանգեցնել վրեժխնդրության դեպքերի ավելացման: Խորհրդարանականի կարծիքով, մահապատիժը վերացնելու հարցը պետք է լուծվի համաժողովրդական հանրաքվեի միջոցով: Դալլաքյանի կարծիքով, Հայաստանում կարելի է վերացնել գնդակահարությունը՝ սակայն որոշ վերապահումներով: Օրինակ, առավելագույն պատժաչափ կիրառել այն մարդկանց նկատմամբ, ովքեր պատերազմի ժամանակ կատարել են որպես պետական դավաճանություն որակվող ծանր հանցագործություն:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 529353, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՈՐԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 562941
Apple Macintosh
համակարգային շարուածքը «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone 521635
47 Hanrapetoutsian st.
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՊՄԲԱԳԻԿ

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ

Ինչ է պատահել մեզ հետ-2

ԿՏՐԻՃ ՍԱԲՂԱՐՅԱՆ

Այս վերտառությամբ գրություն եմ հրապարակել նաեւ 1997 թ. նոյեմբերին, երբ մտերի ու գաղափարների մակընթացության նույն խառնակ պատկերն էր ստեղծվել երկրում: Երկու տարի հետո գրեթե նույնն է կատարվում նախադեպը կրկնելու անպատասխանատու վարքագծով ու հակվածությամբ: Այդ պատճառով էլ ցանկանում եմ խոսքս սկսել 1997 թ. գրության հետեւյալ տողերով. «Այս հուզիչ ու հեղափոխական տեսարանին նայելով զարմանում ես, թե ինչպես կարելի է տարիներ շարունակ անդադրում խոսել ու պտտվել նույն առանցքի շուրջ՝ առանց նոր բան ասելու ու անելու: Ու նաեւ ինքդ քեզ հարց ես տալիս, թե ի՞նչ է պատահել մեզ հետ»: Ցավոք, այն ժամանակ քաղաքական վեճը ոչ միայն չծառայեց ուժերի համախմբմանը հնարավորի բանական մոտեցումների շուրջ, այլեւ անձնավորվեց ու արհեստական երկպառակություն մտցրեց իշխանության դաշտում: Չախողված քաղաքականությունը շտկելու ու երկիրը ծգնաժամից դուրս բերելու կամքի ու վճռականության փոխարեն մեր ժողովուրդն 1998 թ. փետրվարին ականատես դարձավ պատասխանատվությունից խուսափող հրաժարականների:

Քաղաքականության անձնավորումը եւ անտեղի գաղափարական շահարկումներն ավելի սրեցին ներքին հակասությունները: Տարիների լիբերալ-հարմարեցումների ու անպատասխանատու կուսակցությունների հետեւանքով մեզանում պատասխանատվություն սանձնելը դարձավ խաչ իր տարատեսակ դրսեւորումներով:

Արտաքին ու ներքին բնամանքի մթնոլորտում տեղի ունեցավ հոկտեմբերի 27-ի ողբերգությունը: Աղետը վրա հասավ բեկման վճռորոշ պահին: Հույսը դարձավ անորոշություն: Այս անորոշության ու կասկածի մթնոլորտում քաղաքական ուժերը ջանում են ժողովրդին մատնանշել նախագահափոխության խնդրի վրա: Ինքնին անպատասխանատու մոտեցում է, թեկուզեւ այն պարզ պատճառով, որ իսկապես ավարտին է հասցնելու հոկտեմբերի 27-ի գործը: Նման մոտեցման հեղինակները հնարավոր է, որ չեն պատկերացնում, թե նման պարզունակ «հանգուցալուծումն» ինչ հետեւանքներ կարող է ունենալ եւ ինչպես է պատկերվելու հասարակական գիտակցության մեջ: Հնարավոր է նաեւ ես սխալվում եմ ու չեմ տեսնում, որ այս գայրույթն ու ներքին բնամանքը չարագուշակ են-հենց այն առումով, որ փակելու են ծգնաժամից դուրս գալու բոլոր հնարավոր ելքերը եւ արդյունքում քաոսի է վերածվելու երկիրը: Այդպես կարող են զարգանալ իրադարձությունները նաեւ այն պատճառով, որ ջանում են մեզանից վանել հոկտեմբերի 27-ի ոչ միայն քաղաքական, այլեւ բարոյական պատասխանատվությունը:

Այս ոճրագործության հակապետական դրսեւորումը եւ նրան հաջորդած իրադարձությունները շատ գծերով նման են 1918 թ. նոյեմբերին Խ. Կարճիկյանի սպանությանը եւ դրանից հիշ անց Ա. Մանուկյանի խորհրդավոր մահվանը: Կարճիկյանի քաղաքական կարողությունն ու իմաստնությունը եւ Արամի հերոսական խարիզմը Հ. Քաջազնունու կառավարության մեջ կատարում էին քաղաքականությունը պետական չափումներին ու կանոններին ենթարկելու վճռորոշ դեր: Անտանելի ծանր պայմաններում նրանք դիվանագիտական հարաբերություններ հաստատեցին Իրանի, Թուրքիայի, Ադրբեջանի հետ: Հաղթական պատերազմ ունեցան Վրաստանի դեմ եւ գրավյալ տարածքները վերադարձրին ու դրա դիմաց բացեցին Վրաստանի կողմից Հայաստանի շրջափակումը: Եվ այս ամենն ընդունելի նայելով զարմանում ես, թե ինչպես կարելի է տարիներ շարունակ անդադրում խոսել ու պտտվել նույն առանցքի շուրջ՝ առանց նոր բան ասելու ու անելու: Ու նաեւ ինքդ քեզ հարց ես տալիս, թե ի՞նչ է պատահել մեզ հետ»: Ցավոք, այն ժամանակ քաղաքական վեճը ոչ միայն չծառայեց ուժերի համախմբմանը հնարավորի բանական մոտեցումների շուրջ, այլեւ անձնավորվեց ու արհեստական երկպառակություն մտցրեց իշխանության դաշտում: Չախողված քաղաքականությունը շտկելու ու երկիրը ծգնաժամից դուրս բերելու կամքի ու վճռականության փոխարեն մեր ժողովուրդն 1998 թ. փետրվարին ականատես դարձավ պատասխանատվությունից խուսափող հրաժարականների:

Քաղաքականության անձնավորումը եւ անտեղի գաղափարական շահարկումներն ավելի սրեցին ներքին հակասությունները: Տարիների լիբերալ-հարմարեցումների ու անպատասխանատու կուսակցությունների հետեւանքով մեզանում պատասխանատվություն սանձնելը դարձավ խաչ իր տարատեսակ դրսեւորումներով:

Արտաքին ու ներքին բնամանքի մթնոլորտում տեղի ունեցավ հոկտեմբերի 27-ի ողբերգությունը: Աղետը վրա հասավ բեկման վճռորոշ պահին: Հույսը դարձավ անորոշություն: Այս անորոշության ու կասկածի մթնոլորտում քաղաքական ուժերը ջանում են ժողովրդին մատնանշել նախագահափոխության խնդրի վրա: Ինքնին անպատասխանատու մոտեցում է, թեկուզեւ այն պարզ պատճառով, որ իսկապես ավարտին է հասցնելու հոկտեմբերի 27-ի գործը: Նման մոտեցման հեղինակները հնարավոր է, որ չեն պատկերացնում, թե նման պարզունակ «հանգուցալուծումն» ինչ հետեւանքներ կարող է ունենալ եւ ինչպես է պատկերվելու հասարակական գիտակցության մեջ: Հնարավոր է նաեւ ես սխալվում եմ ու չեմ տեսնում, որ այս գայրույթն ու ներքին բնամանքը չարագուշակ են-հենց այն առումով, որ փակելու են ծգնաժամից դուրս գալու բոլոր հնարավոր ելքերը եւ արդյունքում քաոսի է վերածվելու երկիրը: Այդպես կարող են զարգանալ իրադարձությունները նաեւ այն պատճառով, որ ջանում են մեզանից վանել հոկտեմբերի 27-ի ոչ միայն քաղաքական, այլեւ բարոյական պատասխանատվությունը:

Այս ոճրագործության հակապետական դրսեւորումը եւ նրան հաջորդած իրադարձությունները շատ գծերով նման են 1918 թ. նոյեմբերին Խ. Կարճիկյանի սպանությանը եւ դրանից հիշ անց Ա. Մանուկյանի խորհրդավոր մահվանը: Կարճիկյանի քաղաքական կարողությունն ու իմաստնությունը եւ Արամի հերոսական խարիզմը Հ. Քաջազնունու կառավարության մեջ կատարում էին քաղաքականությունը պետական չափումներին ու կանոններին ենթարկելու վճռորոշ դեր: Անտանելի ծանր պայմաններում նրանք դիվանագիտական հարաբերություններ հաստատեցին Իրանի, Թուրքիայի, Ադրբեջանի հետ: Հաղթական պատերազմ ունեցան Վրաստանի դեմ եւ գրավյալ տարածքները վերադարձրին ու դրա դիմաց բացեցին Վրաստանի կողմից Հայաստանի շրջափակումը: Եվ այս ամենն ընդունելությունը կորցրեց պետական չափումները, դարձավ իրադարձությունների գերի ու գլորվեց միջազգային տորված արահետով մինչեւ սուվերեն պետության վախճանը: Այս համեմատությունն արեցի, որպեսզի ցույց տամ, թե այսօր ինչ հանգրվանի ենք հասել եւ ինչով կարող է վերջանալ այս ամենը: Այդ պատճառով էլ ուզում եմ ասել, թե ստեղծված բարդ ու հակասական իրավիճակում ինչ պետք է չանել, որովհետեւ այս վիճակին հասել ենք տարիների մեր իսկ անկասար ու թերի արարքների հանրագումարով:

Ոչ ոք իրավունք չունի մոտեցումները կառուցելու խառնակությունից օգտվելու հոգեբանությամբ: Նման մոտեցումը վնասակար է: Առավել եւս, որ ողբերգության ու դրան հաջորդած խուճապի մեջ Արամ Սարգսյանը համաձայնեց ստանձնել վարչապետի պաշտոնը եւ դառնալ կայունության երաշխավոր: Անկեղծ ասած, ես սկզբում թերահավատությամբ էի նայում այդ նշանակմանը: Մոտեցումս փոխվեց, երբ Հանրապետական կուսակցության խորհրդի նիստից հետո լսեցի նրա լրջմիտ փաստարկներն ու բացատրությունները ստեղծված ներքաղաքական բարդ վիճակի ու դրանից դուրս գալու հնարավորությունների մասին: Մնում է վարչապետին չգցել պետական պատասխանատվության ու «բարոյական» պարտավորվածությունների չմեկնաբանվող ու վտանգավոր հորձանուտի մեջ եւ թույլ տալ, որ նա կատարի իր պարտականությունները:

Հիշենք, որ Հայաստանը ծգնաժամից դուրս բերելու պատասխանատվությունը ստանձնել էին երեքը: Ուստի նահատակված վարչապետի ու Ազգային ժողովի նախագահի հիշատակը հարգել նշանակում է մեկտեղվել եւ երկիրը դուրս բերել ստեղծված վիճակից: Բայց ողբերգությունն այն է, որ մեր իշխող խավին ոչ թե գործող նախագահ է պետք, այլ իրենց անձնական ու խմբային շահերը պաշտպանող կոորդինատոր: Անտեղի ջիղ են ստեղծում նաեւ տեսնելով գաղափարական շահարկումներն ու իմաստակությունները: Այդ ամենը ժամանակավրեպ է ու ոչինչ չտվող: Ի՞նչ գաղափարի ու գաղափարախոսության մասին է խոսքը, երբ պետք է բոլոր ջանքերը գործադրել ու Հայաստանը փրկել տնտեսական պատերազմից, շրջափակումից, փլուզումից ու ուծացումից: Անհրաժեշտ է կռվել կոնֆլիկտի, կոնֆլիկտային հոգեբանության ու անտեղի հակադրման ավատատիրական այլագան դրսեւորումների դեմ: Բոլորս պետք է գիտակցենք, որ Ռ. Քոչարյանը շատ ծանր ժառանգություն է ստացել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության բնագավառում: Ինչ պետք է աներ նա Ստամբուլի գագաթաժողովում, որ չի արել կամ թերացել է: Վետո՞ պետք է դներ 21-րդ դարի եվրոպայի համակեցության խարտիայի վրա: Մեղադրանքն էլ պետք է տրամաբանություն ունենա: Բաքու-Ջեյհան նավթամուղի կառուցումը Հայաստանին դուրս է թողնում տարածաշրջանային գործերից: Ինչո՞ւ հենց Ստամբուլի վեհաժողովից հետո ընդդիմախոսները հասկացան, որ Հայաստանը մեկուսացված է տարածաշրջանից: Իհարկե, վաս է, որ Ադրբեջան-Թուրքիա նավթամուղը շրջանցում է Հայաստանը, բայց դրա մասին հարկ էր ժամանակին մտածել: Հիշենք, թե ինչպես ծախողվեցին 1994 թ. գինադադարից հետո Ադրբեջանի հետ սկսված ուղիղ բանակցությունները, որը հարցը լուծելու ու վերջնական խաղաղություն հաստատելու բացառիկ հնարավորություն էր: Այդ պարագայում շրջափակումն էլ էր բացվելու, նավթամուղն էլ էր անցնելու Հայաստանով (մեր բյուջեի կեսի չափով տարեկան եկամուտով): Ամենակարեւորը՝ Հայաստանը դուրս էր գալու մեծ տերությունների օբյեկտի անհեռանկար վիճակից ու կայանալու էր սուվերեն պետությունը: Ինչո՞ւ ծախողվեց այս ամենը եւ ում ենք հիմա մեղադրում: Չենք օգնում, գոնե չխանգարենք, թեկուզեւ այն բանի համար, որ տարիներ շարունակ ինքնուրույն քաղաքականություն չի վարվել: Նույնիսկ ռազմական հաջողությունից հետո մեր քաղաքականությունը մնաց համակրանքի ու հակվածության ստրատեգիական գերին: Հենց այդ ստրատեգիական սխալների ու բացթողումների հետեւանքով է Հայաստանն հայտնվել այս վիճակում: Նաեւ դա է պատճառը, որ նախագահի գործադրած ջանքերն առայժմ սպասված արդյունքը չեն ունեցել: Ուստի խոսքը չի կարող վերաբերել Ռ. Քոչարյան անձին, այլ դժվարին պատասխանատվություն ստանձնած ՀՀ նախագահին, որը ջանում է Ադրբեջանի հետ ուղիղ բանակցություններով լուծել Ղարաբաղի հարցը եւ երկիրը դուրս բերել ծգնաժամի կապանքից: Սա է գլխավորը: Եվ ովքեր որ այս հարցում խանգարելու են նրան, հայ ժողովրդի իրական շահերի հետ որեւէ կապ չունեն:

Անձամբ իր համար երեւի շատ էլ ծեռնտու կլինի հրաժարվել եւ դուրս գալ քննամանքի ու ատելության այս մթնոլորտից, բայց նա դիմակայում է, որովհետեւ պատասխանատվություն է զգում ժողովրդի ու երկրի ապագայի հանդեպ: Դրանով նա նաեւ հարգում է հոկտեմբերի 27-ին նահատակված իր գործընկերների հիշատակը: Իսկ թե նրան հաջողվի փակուղին բացել ու Հայաստանը դարձի բերել խաչմերուկի իր բնական ու բանական վիճակին, դա կլինի նաեւ հիշատակի հուշարձան (հավանաբար չեմ մոռացել, թե հանգուցյալ վարչապետն ինչ էր խնդրում ԱՄՆ իշխանություններից): Կարծում եմ, որ քաղաքական ուժերը պարտավոր են հարգել պատասխանատու այս մոտեցումը, մինչեւ որ ժամանակն իր ճշգրտումները կանի եւ ամեն ինչ իր տեղը կդնի: Հայաստանն այս ծանր կացությունից դուրս բերելու այլընտրանքային ուղի չունի պարզապես: Նախագահի հրաժարականը եւ նոր ընտրությունները հղի են կանխատեսելի հետեւանքներով: Սնանկ է այն փաստարկը, որ նախագահը պետք է հեռանա, որովհետեւ հենարան չունի: Երկիրը ծգնաժամից դուրս բերելու հստակ պատկերացում, իմաստություն, կամք ու պետական վճռականություն ունեցող նախագահը միշտ էլ հենարան կունենա:

Խոսքս ցանկանում եմ ավարտել դարձյալ սթափվելու, խմբային ու հատվածային շահերի բախումից երկիրը դուրս բերելու խնդրանքով: Անցողիկ կրքերը մեզ կարող են գցել այնպիսի մոլորության ու խառնակությունների մեջ, որից դուրս գալը հետո պարզապես անհնարին կլինի: 1993 թ. մեր արեւմտյան հարեւան պետության ղեկավարը մի առիթով դաժան բան է ասել. «Մենք կշրջափակենք Հայաստանը, իսկ մնացածը ժամանակի ընթացքում հայերն իրենց ձեռքով կանեն»: Եթե վիրավորեցի ազգային արժանապատվությունը, պատրաստ եմ ներողություն խնդրել, բայց մի կանխավ պայմանով, եթե մեր քաղաքական վերնախավը կարողանա իր խելամիտ գործերով հակառակն ապացուցել: Բոլորս ենք դա ցանկանում ու դրան սպասում:

ԱՍԱԼԱ

ՀԱՀԿ բանակի հայտարարությունը հիմնադրման 25-ամյակի առթիվ

Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակը հունվարի 20-ին տարածել է մի հայտարարություն, որն առնչվում է այս կազմակերպության ստեղծման 25-ամյակին: Խոսելով ՀԱՀԳԲ-ի (ԱՍԱԼԱ) կատարած գործունեության մասին, վերլուծելով ներկա իրավիճակում Հայ դատի հետապնդման խնդիրը, հայտարարության մեջ նշվում է, որ արցախյան ազատագրական պայքարի ծավալման հետ ու Հայաստանի անկախացումով համայն հայության համար հույսի եւ ակնկալության նոր ծիլեր արձակվեցին: Սակայն, ինչպես նշվում է հայտարարության մեջ. «...ցարդ կատարուածը միայն յուսախաբութիւն կրնայ պատճառել: Հայաստանցի պետական այրերը մերթ ալ անտեսեցին, որ համայն հայութեան պետականութեան ներկայացուցիչի հանգամանքը մենաշնորհյալ դիրքն է, որ պարտին տալիս ուղղամտութեամբ, անշահախնդրօրէն եւ առանց դոյզն հատուածականութեան»:

Հայտարարության մեջ նշվում է եւ Հայաստանում, եւ սփյուռքում 70-80-ական թվականներին հայ վերազարթնումը հերթական անգամ մտել է թմբիրի մեջ: Ստեղծվել է անտարբեր մի սփյուռք, որը չգիտե որտեղ է գտնվում, ուր է գնում եւ մանավանդ ուր է ուզում գնալ: Միեւնույն ժամանակ, թերեւս բարեմիտ, բայց քաղաքականորեն միամիտ այրեր, Հայկական ցեղասպանության խնդիրներով աշխատած ծավալող անձեր եւ կազմակերպություններ այցելում են Թուրքիա, կոչ ուղղում թուրք պետությանը եւ նրա հանրային-կարծիքին Հայկական ցեղասպանությունը ճանաչելու համար: Սակայն նրանք անգիտանում են, որ քաղաքական հարցերը եւ Հայկական ցեղասպանության փաստը վերջնական ճանաչման հասցնելու համար մեծ ազդեցություն կարող են ունենալ ուժերի հարաբերակցության փոփոխման շնորհիվ միայն: Ճիշտ է, պատմական փորձը ցույց է տալիս, նշված է հայտարարության մեջ, որ փոքր ժողովուրդներն իրենց իրավունքներին կարող են տիրանալ եւ իրենց ձայնը լսելի դարձնել այն դեպքում, երբ միջազգային համակարգը հավասարակշռված է, եւ այդ հավասարակշռությունն առիթ կընծայի, որ իրավունքի եւ արդարության սկզբունքները հիմնավորվեն եւ գործադրվեն:



Բայց երբ-տիրում է միաբեւեռ եւ այլամերժ համակարգ, ուժն է դառնում տիրակալը: Իրավունքի եւ արդարության իդեալները ենթակա են ուժերի քմահաճույքներին:

«Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակը Արեւմտահայաստանի ազատագրության նպատակին նուիրուած կազմակերպութիւնը, այսօր բոլոր ժամանակներէ աւելի վճռական է շարունակելու պայքարը յանուն հայութեան հողային եւ մարդկային իրաւունքների վերականգնման», վերջում ասված է հայտարարության մեջ:

Ս. Գ.

Երբ երկիրը թուլանում է...

Սկիզբը էջ 1

Միջնորդի խնդիրը հակամարտողներին բանակցությունների սեղանի մոտ բերելն է: Երաշխավորինը ձեռք բերվելիք պայմանավորվածությունների կիրարկմանն անմիջականորեն մասնակցելը, կողմից ասած հակամարտության գոտի զորքեր մտցնելը:

Իհարկե, Պուտինի հայտարարությունից մինչեւ «երաշխավորի» պարտականությունների սանձնում դեռ շատ ճանապարհ կա: Եվ շատ հնարավոր է, որ դա երբեք էլ չիրականացվի: Նկատի առնելով առաջիկա նախագահական ընտրությունների մթնոլորտը Ռուսաստանում, կարելի է ենթադրել, թե Վլադիմիր Պուտինի այս անսպասելի հայտարարությունն ավելի շատ ուղղված էր իր երկրի հասարակական կարծիքին եւ միտված էր քաղաքական դիվիդենտներ շահելուն (տեսեք, ի՞նչ «ակտիվ» քաղաքականություն ենք վարելու): Բայց բացառված չէ նաեւ հակառակը: Պուտինի հաղթանակից հետո, որին հիմա հազիվ թե որեւէ մեկը կասկածում է, Ռուսաստանն սկսում է ամենաակտիվ քայլեր ձեռնարկել հենց հակամարտության գոտի ներթափանցելու ուղղությամբ, ուժեղացնում է ճնշումը թե Հայաստանի, թե Ադրբեջանի վրա, որպեսզի նրանք դա «խնդրեն»:

Շատ միամիտ պիտի լինել ենթադրելու համար, թե ռուսների նման «ներթափանցումը» միանշանակորեն մեր օգտին կարող է լինել: Իհարկե, նրանք Ադրբեջանի հետ լուրջ խնդիրներ ունեն: Եվ հենց դա էլ մտահոգիչ է. քանզի Մոսկվան, պատեհությունը ներելու դեպքում, հազիվ թե վարանի Բաքվի հետ իր այդ «խնդիրները» լուծել... մեր հաշվին: Համենայն դեպս, մեկ անգամ չէ, որ այդպես է եղել: Ռազմավարական դաշնակիցը դաշնակից, բայց այդ դաշնակիցն էլ պիտի «հարգի» քեզ, որպեսզի չգայթակղվի քո շահերն իր օգտին ծառայեցնելու հնարավորությամբ: Իսկ նման «հարգանքը» վաստակում են միմիայն... ուժով, ժողովրդի միահամուռությամբ, երկրի քաղաքական կայունությամբ, սեփական իշխանությունների ամրությամբ: Հոկտեմբերի 27-ից հետո մենք այս բոլոր ուղղություններով խիստ թուլացել ենք եւ ներքիշխանական տեւական գզվռտոցով շարունակում ենք այդ կործանարար «գործընթացը»: Ահա եւ առաջին «ծիծեռնակը». այսօր մեր գործերին ուղղակիորեն միջամտելու պատրաստակամություն է հայտնում Վլադիմիր Պուտինը: Նույնն է ակնարկում ԱՄՆ պետքարտուղարի խորհրդական Սթիվեն Սեսանովիչը (տես **«Ազգի»** երեկվա հրապարակումը), վաղը նա էլ ավելի որոշակիորեն կարտահայտվի: Սա էլ հենց դրսի միջամտությունների վտանգի մեծացումն է, որի մասին մեկ անգամ չենք զգուշացրել մեր թերթի էջերում: Իսկ որ այդ միջամտությունները բխել եւ բխելու են ոչ թե մեր, այլ գերտերությունների ասպարհամաղաքական շահերից կախված դուրս է:

Հետեւաբար, մի անգամ եւս հորդորում եմ զգոն լինենք:

ԱԶԳ

ԱՍՊԱՐԷԶ

ՍՈՒՐԲ ՎԱՅՐԵՐ

Կյանք հրաբխի վրա

Երուսաղեմում դարեր ի վեր ծվարած է մի հայ համայնք

Երուսաղեմ կատարած այցելության ժամանակ ելույթ ունենալով տեղի հայ համայնքի առջեւ՝ նախագահ Քոչարյանը հայտնեց մոտավորապես այս միտքը. «Հայաստանում պատկերացում անգամ չունեն, թե համայնքն ինչպիսի հարստության պահապանն ու տնօրինողն է»: Իրոք, Իսրայել պետության հետ ոչ ափսույժ փոխհարաբերության հանգամանքի բերումով տեղի հայ համայնքն ու եկեղեցին էլ ներփակ ու անկախ կարգավիճակ են ունեցել: Երուսաղեմի հայ համայնքի կենցաղի ու անցուդարձի մասին առաջին էական տվյալները, նրանց հետ անմիջական շփումն ունեցանք Հայաստան-

կարողանում է պահպանել քրիստոնյա աշխարհի եկեղեցիների համար «խաղաղ պատառ» հանդիսացող մի քարե սրբավայրերի վրա ունեցած տարածքային իր իրավունքները. բավական է լոկ թվարկել, որ Հայ եկեղեցուն են պատկանում տիրույթ-մասնաբաժիններ Երուսաղեմի Սուրբ Հարության եւ Բեթղեհեմի Սուրբ Ծննդյան տաճարներում, Շիբենյաց լեռան եւ Գեթսեմանի պարտեզի սրբավայրերում, կրոնական առումով կարեւոր այլ կետերում:

Ինչ վերաբերում է հայ ափխարհիկ համայնքին, ապա նա ձեւավորվել է պատրիարքության հաստատումից հետո: Հայ համայնքն այստեղ, ըստ էության, երբեք էլ այլի չի ընկել մեծ թվանակով, սակայն ունեցել է իր կայուն տեղը՝ հավատարմորեն տեր կանգնելով դարավոր սեփականությանը: Թեպետ հայեր են բնակվում Իսրայելի շատ քաղաքներում, սակայն նրանց հիմնական մասը՝ 2000-ից ավելի, կենտրոնացած է կես միլիոնը գերազանցող բնակչություն ունեցող Երուսաղեմում, ուր, Դավիթ թագավորի ամրոց-թանգարանի հարեւանությամբ, հայկական թաղամասն է:

Այստեղ են գտնվում Սուրբ Հակոբ վանքը՝ հայկական ծեռագիր մատյանների հարուստագույն «հանգրվանը», պատրիարքարանը, ժառանգավորաց վարժարանը, որը կրոնական բարձրագույն ուսումնական հաստատություն է, Թարգմանչաց վարժարանը եւ այլ հաստատություններ, ուր ուսումնառում են հայ ընտանիքների զավակները: Քաղաքական կազմակերպություններից այստեղ կառույցներ ունեն 2 ավանդական կուսակցությունները՝ Ռամկավար ազատականը, որին պատկանում է հայ երիտասարդաց միությունը, եւ ՀՅԴ-ն՝ հանձին Հայ մարմնամարզական ընդհանուր միության, ինչպես նաեւ Հայ դատի կոմիտեն, որի շնորհիվ էլ, մեր տեղեկություններով, Իսրայելի խորհրդարանը ճանաչել է Հայոց ցեղասպանության փաստը: Ի դեպ, ՌԱԿ անդամներն այստեղ, այլ կազմակերպությունների համեմատությամբ, առավելագույն թիվ են կազմում եւ ափխուժորեն գործող միություն ունեն. ինչպես պարզվեց նրանց հետ զրույցից՝ կուսակցական պատկանելությունն, ասես ժառանգություն, փոխանցում են սերնդեսերունդ: Հայ համայնքում գործում են նաեւ մի քանի հասարակական կազմակերպություններ, ինքնուրույն եւ ներփակ գոյությանն անհրաժեշտ բազմաթիվ կառույցներ, վանքապատկան տարածքը՝ հայկական թաղամասով հանդերձ, ասես պետություն է պետության մեջ: Հայկական թաղամասի փողոցներում լոկ հայերի խանութներ ու սրճարաններ են՝ ազգային անվանումներով, սակայն, ցավոք, արդեն ոչ լիովին ազգային բնույթով:

Թաղամասի բնակիչները զբաղվում են գլխավորապես առեւտրով ու արհեստներով: Նրանք չունեն Իսրայել պետության անձնագրեր (այդ առումով այս երկրում «հեթանոսական» օրենքներ են գործում՝ լոկ հրեաների հանդեպ չափազանց ժողովրդավարական ու մարդասիրական), սակայն անձեռնմխելի են պատրիարքարանի հովանու ներքո: Հայերը, փաստորեն, բնակվում են վանքապատկան տիրույթում, կրթվում ազգային հաստատություններում, իրենց տնտեսական գործունեությունը ծավալում թաղամասի սահմաններում. այստեղ նրանք իրավաբանորեն ու հոգեբանորեն իրենց անվտանգության մեջ են զգում:

Ի դեպ, համայնքում փոքր թիվ չեն կազմում եւ վերջին տարիներին Իսրայել գաղթած հայերը, որոնց անմիջապես տարբերում ես, քանզի ողջ կերպարով դեռեւս հայաստանցի են՝ մեզ առավել հոգեհարազատ ու հայրենիին կարոտած մարդիկ: Նրանցից շատերին ափխատանքով ապահովել էր պատրիարքարանը՝ իր տարածքների տնտեսական մասում պահանջվող տարբեր ծառայություններ հանձնարարելով: Մի քանի հայ աղջիկներ (նաեւ՝ Հայաստանից տեղափոխված) սովորում էին Եբրայական համալսարանում. նրանց հետ առիթ ունեցա զրուցելու նաեւ երկրին առնչվող ընդհանուր հարցերից եւ անվերջանալի պատերազմներից: Երեկոյան որոշակի ժամերից սկսած՝ հայերն, օրինակ, շատապում են փակվել տներում. քաղաքում չեն դադարում պարբերական ընդհարումները հրեաների ու արաբների միջեւ, ինչը կարող է արտահայտվել սպանությամբ կամ սոսկ ահաբեկչությամբ ավարտվող զինված հարձակումներով:

Գիշերային Երուսաղեմը մարդաշատ չէ, ինչպես, ասենք, եվրոպական քաղաքները: «Այստեղ ապրում ես՝ չունենալով անվտանգության զգացում ոչ միայն հաջորդ օրվա, այլեւ՝ հաջորդ րոպեի համար իսկ», պատմում էին, «քանզի կարող է պայթեցվել ավտոբուսը, որով երթեւեկում ես, կամ հաստատությունը, ուր ափխատում ես, ի վերջո կարող է կատարվել ինչ ասես»: Սակայն, շարունակում էին պատմել, հրաբխի վրա ապրելուն էլ ես վարժվում, պարզապես զինվում ես անկանխատեսելիության երբեք չթուլացող զգացումով: Ահաբեկչությունն առավել «ընդունված» է Թել Ավիվում, որը բարեբախտաբար լիովին եվրոպական քաղաք է: Այլ է Երուսաղեմը, որը հավատացյալների ու ավանդապաշտների քաղաք է, կրոնների ու ժողովուրդների խայտաբղետ շահանդես հիշեցնող այս հավատաղիում յուրահատկություն» ապրում է իր հավատի, ազգի ու դավանանքի օրենքներով:

Երկրի ներքաղաքական անհանգիստ

ստիպում համաժողովում, ուր ներկա էր Երուսաղեմահայ համայնքի պատվիրակությունը: Հետո կարճ ասես վերջին ընդհատվեց, թեպետ կաթողիկոսական ընտրություններին ներկայացել էր նաեւ Երուսաղեմի պատրիարքարանի պատվիրակությունը: Ինչ վերաբերում է Հայաստանի պատվիրակության՝ օրերս կայացած այցին, ապա վերաբերմունքն ու տպավորությունը միանշանակ չես գնահատի. այս առաջին անմիջական ու համեմատաբար ոչ հոգանցիկ շփումն ավելի շուտ երկկողմ զննողական բնույթ ուներ: Հիշեցնեմ, որ նախագահ Քոչարյանը Հայաստանի ղեկավարներից առաջինն էր, ով ոտք դրեց Իսրայել պետություն, Պաղեստին եւ Երուսաղեմի հայ համայնք: Սուրբ Ծննդի տոնակատարության եւ հաջորդող օրերին քրիստոնեական սրբավայրեր ուխտագնացության ընթացքում տեղի հոգեւորականները մեր պատվիրակությանը ծանոթացրին Հայ եկեղեցու Երուսաղեմում ունեցած տիրույթներին, ներկայացրին պատրիարքարանի՝ դարեր ի վեր կուտակած հնամենի հարստությունը, որը մեծ արժեք է նաեւ արվեստագիտական գնահատման տեսանկյունից:

Հայերը Երուսաղեմ են մուտք գործել քրիստոնեության տարածման դեռեւս վաղ շրջանում՝ 4-րդ դարից. արդեն 6-րդ դարում հայերի կառուցած վանքերի թիվն այստեղ հասնում էր 70-ի, իսկ հաջորդ դարում վերջնականապես ծեւավորվեց նաեւ Երուսաղեմի հայոց պատրիարքությունը: Վերջինը, Պաղեստին երկրի անհանգիստ քաղաքական բովում դարեր շարունակ մանեւրելով,

Հայ երեխաները դիմավորում են սենատոր Ջիմ Ռոգանին

թյան, երբեք էլ այլի չի ընկել մեծ թվանակով, սակայն ունեցել է իր կայուն տեղը՝ հավատարմորեն տեր կանգնելով դարավոր սեփականությանը: Թեպետ հայեր են բնակվում Իսրայելի շատ քաղաքներում, սակայն նրանց հիմնական մասը՝ 2000-ից ավելի, կենտրոնացած է կես միլիոնը գերազանցող բնակչություն ունեցող Երուսաղեմում, ուր, Դավիթ թագավորի ամրոց-թանգարանի հարեւանությամբ, հայկական թաղամասն է:

Այստեղ են գտնվում Սուրբ Հակոբ վանքը՝ հայկական ծեռագիր մատյանների հարուստագույն «հանգրվանը», պատրիարքարանը, ժառանգավորաց վարժարանը, որը կրոնական բարձրագույն ուսումնական հաստատություն է, Թարգմանչաց վարժարանը եւ այլ հաստատություններ, ուր ուսումնառում են հայ ընտանիքների զավակները: Քաղաքական կազմակերպություններից այստեղ կառույցներ ունեն 2 ավանդական կուսակցությունները՝ Ռամկավար ազատականը, որին պատկանում է հայ երիտասարդաց միությունը, եւ ՀՅԴ-ն՝ հանձին Հայ մարմնամարզական ընդհանուր միության, ինչպես նաեւ Հայ դատի կոմիտեն, որի շնորհիվ էլ, մեր տեղեկություններով, Իսրայելի խորհրդարանը ճանաչել է Հայոց ցեղասպանության փաստը: Ի դեպ, ՌԱԿ անդամներն այստեղ, այլ կազմակերպությունների համեմատությամբ, առավելագույն թիվ են կազմում եւ ափխուժորեն գործող միություն ունեն. ինչպես պարզվեց նրանց հետ զրույցից՝ կուսակցական պատկանելությունն, ասես ժառանգություն, փոխանցում են սերնդեսերունդ: Հայ համայնքում գործում են նաեւ մի քանի հասարակական կազմակերպություններ, ինքնուրույն եւ ներփակ գոյությանն անհրաժեշտ բազմաթիվ կառույցներ, վանքապատկան տարածքը՝ հայկական թաղամասով հանդերձ, ասես պետություն է պետության մեջ: Հայկական թաղամասի փողոցներում լոկ հայերի խանութներ ու սրճարաններ են՝ ազգային անվանումներով, սակայն, ցավոք, արդեն ոչ լիովին ազգային բնույթով:

Թաղամասի բնակիչները զբաղվում են գլխավորապես առեւտրով ու արհեստներով: Նրանք չունեն Իսրայել պետության անձնագրեր (այդ առումով այս երկրում «հեթանոսական» օրենքներ են գործում՝ լոկ հրեաների հանդեպ չափազանց ժողովրդավարական ու մարդասիրական), սակայն անձեռնմխելի են պատրիարքարանի հովանու ներքո: Հայերը, փաստորեն, բնակվում են վանքապատկան տիրույթում, կրթվում ազգային հաստատություններում, իրենց տնտեսական գործունեությունը ծավալում թաղամասի սահմաններում. այստեղ նրանք իրավաբանորեն ու հոգեբանորեն իրենց անվտանգության մեջ են զգում:

Ի դեպ, համայնքում փոքր թիվ չեն կազմում եւ վերջին տարիներին Իսրայել գաղթած հայերը, որոնց անմիջապես տարբերում ես, քանզի ողջ կերպարով դեռեւս հայաստանցի են՝ մեզ առավել հոգեհարազատ ու հայրենիին կարոտած մարդիկ: Նրանցից շատերին ափխատանքով ապահովել էր պատրիարքարանը՝ իր տարածքների տնտեսական մասում պահանջվող տարբեր ծառայություններ հանձնարարելով: Մի քանի հայ աղջիկներ (նաեւ՝ Հայաստանից տեղափոխված) սովորում էին Եբրայական համալսարանում. նրանց հետ առիթ ունեցա զրուցելու նաեւ երկրին առնչվող ընդհանուր հարցերից եւ անվերջանալի պատերազմներից: Երեկոյան որոշակի ժամերից սկսած՝ հայերն, օրինակ, շտապում են փակվել տներում. քաղաքում չեն դադարում պարբերական ընդհարումները հրեաների ու արաբների միջեւ, ինչը կարող է արտահայտվել սպանությամբ կամ սոսկ ահաբեկչությամբ ավարտվող զինված հարձակումներով:

Գիշերային Երուսաղեմը մարդաշատ չէ, ինչպես, ասենք, եվրոպական քաղաքները: «Այստեղ ապրում ես՝ չունենալով անվտանգության զգացում ոչ միայն հաջորդ օրվա, այլեւ՝ հաջորդ րոպեի համար իսկ», պատմում էին, «քանզի կարող է պայթեցվել ավտոբուսը, որով երթեւեկում ես, կամ հաստատությունը, ուր ափխատում ես, ի վերջո կարող է կատարվել ինչ ասես»: Սակայն, շարունակում էին պատմել, հրաբխի վրա ապրելուն էլ ես վարժվում, պարզապես զինվում ես անկանխատեսելիության երբեք չթուլացող զգացումով: Ահաբեկչությունն առավել «ընդունված» է Թել Ավիվում, որը բարեբախտաբար լիովին եվրոպական քաղաք է: Այլ է Երուսաղեմը, որը հավատացյալների ու ավանդապաշտների քաղաք է, կրոնների ու ժողովուրդների խայտաբղետ շահանդես հիշեցնող այս հավատաղիում յուրահատկություն» ապրում է իր հավատի, ազգի ու դավանանքի օրենքներով:

Երկրի ներքաղաքական անհանգիստ

ԱՆՈՒՇ ԲԱԲԱՅԱՆ

Երուսաղեմ-Երեւան

Ճանապարհ դեպի իշխանություն

Կալիֆոռնիայում բնակվող հայերը նահանգի քաղաքական դաշտում իրական ուժ են դառնում

2000 թվականն ամերիկահայերի համար խոստանում է քաղաքական առումով շրջադարձային լինել՝ լի անկանխատեսելի զարգացումներով: 1982-ից հետո, երբ պատմության մեջ առաջին անգամ Կալիֆոռնիայի նահանգապետ ընտրվեց հայ Ջորջ Դուքմեջյանը, դժվար է մատնանշել այլ ընտրություններ, երբ հայերի ձայները վճռորոշ նշանակություն են ունեցել: Փողը հնարավոր է, բայց ոչ ձայները: Այս տարվա նոյեմբերին հայերը եւս մեկ, եզակի հնարավորություն կստանան վերականգնելու 1980-ականների սկզբին Դուքմեջյանի հաղթանակով վաստակած հարգանքը: Նախկին իրավախորհրդատու Ռոբերտ Փիլիպոսյանի համոզմամբ. «Շատ կարեւոր է Ամերիկայում ապրող ոչ հայերին ապացուցել, որ հայ համայնքը հետաքրքրված է քաղաքականությամբ, հնարավորություն ունի ազդելու դրա ծեւավորման վրա եւ պատրաստվում է այդ անել»: Քաղաքական տարբեր շրջանակների պատկանող դիտորդներն ու վերլուծաբանները համոզված են, որ ընտրություններում հայերը վերջապես ցույց կտան, թե ինչի են ընդունակ: Ներկայումս ազգերի խառնարան դարձած Գլենդեյլը մեծ նշանակություն է ձեռք բերել: Մի կողմից հանրապետականները ձգտում են իրենց ազդեցության տակ պահել, ինչ արդեն ունեն՝ զբաղեցնելով բոլոր հնարավոր պատգամները, մյուս կողմից դեմոկրատներն են ձգտում 43-րդ ընտրատարածքը ներգրավել իրենց «ազդեցության ոլորտների» մեջ: Ինչպես նշում է Հայ ազգային կոմիտեի գործադիր տնօրեն Վիգեն Փափազյանը. «Անպասելիորեն գլենդեյլաբնակ հայերը գրավում են ոչ միայն տեղական եւ նահանգային, այլեւ ամբողջ երկրի հանրապետականների ու դեմոկրատների ուշադրությունը»: Նախկինում երբեք ամերիկահայ համայնքը չի գտնվել այսքան նպաստավոր դիրքում: Փաստորեն այսօր շատերն այնքան են համոզված, որ հայերը կարող են ազդել ընտրությունների արդյունքների վրա, որ դրան վերաբերվում են որպես կարեւոր իրողության: «Եթե դրա լույսը դեռ չի երեւում, տխրությունն արդեն զգացվում է», ասում է քաղաքական խորհրդատու Երիկ Հակոբյանը: Ամեն դեպքում ակնհայտ է, որ պայմանների եզակի զուգադիպմամբ ստեղծվել է մի վիճակ, երբ հայերի ձայնը խիստ վճռորոշ նշանակություն է ստանում: Հայկական խնդիրները եւ ստեղծված իրավիճակը պարբերաբար լուսաբանվում են «Գլենդեյլ նյուս պրեսս», «Գլենդեյլ պրեսս», «Լոս Անջելես թայմս» եւ «Դեյլի նյուս» պարբերականների էջերում:

Հայկական համագումարի արեւմտյան գրասենյակի անդամ Փիթեր Աբաջյանը համոզված է, որ «Կալիֆոռնիայի հայերը կարեւոր ուժ կմնան ոչ միայն պառլամենտական, այլեւ նախագահական ընտրությունների ժամանակ: Նոյեմբերին հանրապետականները մտադիր են «ետ գրավել» Սպիտակ տունը, որի համար կպահանջվի հայկական ընտրածայների մեծամասնությունը: Ամեն դեպքում հայերը հայտնվում են նպաստավոր դրության մեջ»: Կոնգրեսական Ջիմ Ռոգանը եւ նրա մրցակից Ադամ Սիվն արդեն իսկ անում են հայերի սրտերը գրավելու առաջին քայլերը: Ռոգանը հուլիսին իր մոտ աշխատանքի ընդունեց խորհրդատու Լենա Կայմյանին, սեպտեմբերին առաջին անգամ այցելեց Հայաստան եւ Արցախ, հրապարակավ դատապարտեց Եղեռնը եւ հանդես եկավ 907 կետի պահպանման օգտին: Սենատոր Սիվը 463 հազար դոլարով նպաստեց հայկական «Ականատեսներ» վավերագրական ֆիլմի ստեղծմանը, որի Եղեռնից մազապուրծ հերոսները պատմում են իրենց հիշողությունները կորստի եւ գոյատեւման մասին: Երիկ Հակոբյանը համոզված է, որ հայերը հիմար կլինեն, եթե այս իրավիճակից չփորձեն օգտվել, քանի որ ժամանակը հասունացել է թեկնածուներին տեղյակ պահելու, թե ինչ են պահանջում իրենց ձայների դիմաց, մասնավորապես պատշաճապես ճանաչել Եղեռնը, քվեարկել 907 կետի պահպանման օգտին, ճանաչել Արցախի անկախությունը: Կարեւոր է նաեւ վերահսկել, որ ոչ ոք չփորձի հիմարացնել հայ ընտրազանգվածին խոստանալով բաներ, որոնք չի իրականացնելու:

Սքնոլորտի շիկացում է սպասվում երկու հայ թեկնածուների դեմոկրատ Պոլ Գրիգորյանի եւ հանրապետական Գրեգ Միսակյանի շուրջ: Ընտրողները, որոնց համար ազգանվան «յան» վերջավորությունն այլեւս բավարար չէ, հույս ունեն, որ առողջ մրցակցության պայմաններում հայ թեկնածուները կփորձեն շահել ձայների մեծամասնությունը:

Ընդհանրապես 2000 թ. նոյեմբերի ընտրություններն ավելին են, քան պարզապես ապացույց, որ գլենդեյլաբնակ հայերն ուժ են, որի հետ պետք է հաշվի նստել: Համայնքի ակտիվիստները համոզված են, որ դա արթնության կոչ կլինի, որը «կցնցի» նույնիսկ Սպիտակ տունը: Փաստ է, որ եթե հայերը 200 կամ 300 հազար քվեաձայն ունեն, ուրեմն կարող են ընտրել, թե ում են ուզում տեսնել երկրի նախագահի աթոռին:

Ռ. ԱՇԻՇՅԱՆ

Ըստ AIM-ի

ԱԶԳ

Միջազգային

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Էլեկտրաէներգիայի ոլորտում ՀՀ-ն ծանրակշիռ խոսք ունի ասելու

«Հայէներգո» ՊՓԲԸ տնօրեն Կարեն Կարապետյանը կտրուկ հերքեց տարածված այն տեղեկությունը, թե հանրապետությունից էլեկտրաէներգիան արտահանվում է ավելի էժան գներով, քան տրվում է ներքին բաժնորդներին: Ըստ նրա, չնայած ծկունության, ֆինանսական փոխհատուցման, այս պահին շուկան զրավելու հետ կապված հարցերին, խիստ «արգելափակում» է դրված, որ ներքին շուկայում էլեկտրաէներգիայի մեծածախ գինը չգերազանցի արտահանվողին: Ավելին, ներքին շուկային առաջին հերթին մատակարարվում է էժան արտադրողի էլեկտրաէներգիան:

Տնտեսական թեմաներով գրող լրագրողների համար Կրթության զարգացման ակադեմիայի (AED) կազմակերպած հանդիպման ժամանակ «Հայէներգոյի» տնօրենը հայտարարեց, որ 1998-99 թթ. ընթացքում հայկական էներգահամակարգին հաջողվել է հաղթահարել նախկին ճգնաժամը դեֆիցիտայինից դառնալով ավելցուկային: Հայաստանն այսօր ամենաակտիվ արտահանողներից է տարածաշրջանում:

ՀՀ-ում դրվածային հզորությունները 3200 մվտ են չհաշված ՀԱԷԿ-ի երկրորդ եւ Հրազդանի ՊՇԷԿ-ի հինգերորդ բլոկները: Ներկայումս աշխատունակ վիճակում է 2500 մվտ հզորություն, ծմռան շրջանում առավելագույն սպառումը շուրջ 1100 մվտ է: Եվ սա այն դեպքում, երբ էներգակիրների 75-85 տոկոսը ՀՀ-ն ներկրում է: Հանրապետության միջհամակարգային գծերի հզորություններն են. Հայաստան-Վրաստան-Ալավերդիինը՝ 270 մվտ, Հայաստան-Վրաստան-Լալվարիինը՝ 50 մվտ, Հայաստան-Իրան-Սեղրիինը՝ 250 մվտ, Հայաստան-Արցախինը 60 մվտ: Կան նաեւ չգործող կայծր Հայաստան-Թուրքիա 300 մվտ, Հայաստան-Ադրբեջան 450 մվտ հզորություններով, ինչպես նաեւ Հայաստան-Նախիջեւան երկու գծերը: Թվաբանությունը ցույց է տալիս, որ ներկա դրությամբ մեր երկրի էլեկտրաէներգիայի ավելցուկն ավելի շատ է, քան գործող գծերի թողունակությունը եւ, որ Հայաստանն իր ծանրակշիռ խոսքն ունի տարածաշրջանում:

Կարեն Կարապետյանի ներկայացմամբ, տարածաշրջանային էներգետիկ քարտեզը ներառում է Հյուսիսային Կովկասը, Վրաստանը, Բուլղարիան, Թուրքիան, Ադրբեջանը, Իրանը, վերջինիս հարեւաններին, եւ Հայաստանը հեռագնա ծրագրեր է մշակում բոլոր ուղղությունների համար: 1998-99 թթ. Հայաստանից Վրաստան ավելի շատ էլեկտրաէներգիա է առակել, քան այդ երկրին մատակարարել են ռուսական երկու հզոր ընկերությունները ՌԱՕԵՍ-ը եւ «Ռուսէներգոսնոմը»: Սա այն դեպքում, երբ հայաստանյան էլեկտրաէներգիան ռուսականից 1,8 անգամ թանկ է եղել: Դա առաջին հերթին բացատրվում է հայկական միջհամակարգային գծի կայունությամբ, ինչպես նաեւ Թբիլիսիի Հայաստանին մոտ գտնվելով: Ի դեպ, Վրաստանի մայրաքաղաքը ՀՀ էներգահամակարգի հետ աշխատում է «կղզի» տարբերակով՝ անջատվելով վրացական էներգահամակարգից: Այս շաբաթվա սկզբում «Հայէներգոյի» վրաստանյան երկու գործընկերների՝ «Սաքէներգոյի» եւ «AES-Թելասիի» պարտքը կազմում էր համապատասխանաբար 4,5 մլն եւ 1 մլն 252 հազար դոլար: Առաջին պարտքը երաշխավորված է ՀՀ վառելիքի եւ էներգետիկայի ու ֆինանսների նախարարությունների կողմից: Բանակցություններում հայկական կողմն առաջարկում է վճարման տարբեր բանաձեւեր, այդ թվում դեբիտորական այդ պարտքը վերածելու ակտիվի: Ռուսաստանում մեր կրեդիտորական պարտքերը մարելու համար: «AES-Թելասի»-ին այս տարի էլեկտրաէներգիա էր տրվել 10 օր՝ վճարումը կատարելուց հետո միայն առաքումը վերականգնելու պայմանով: Երեկ «Հայէներգոյի» տնօրենը **«Ազգին»** լրագրողներին տեղեկացրեց, որ հունվարի 25-ին 00 ժամից էլեկտրամատակարարումը դեպի Վրաստան վերականգնվել է: Դրան նախորդել են «AES-Թելասիի» կատարած վճարումները՝ 1 մլն 252 հազար դոլար՝ եղած պարտքի, 575 հազար՝ 1999 թ. դեկտեմբերի 30-հունվարի 8-ը տրվածի, եւ 400 հազար դոլար կանխավճար՝ առաջիկա 14 օրերի համար: Ներկայումս Վրաստան է առաքվում օրական շուրջ 2400 մվտ էլեկտրաէներգիա, ինչը թույլ կտա Թբիլիսիում սահմանել 9-ժամյա մատակարարման գրաֆիկ:

Իրանի հետ հարաբերությունները Կարեն Կարապետյանը գնահատեց որպես «լավագույն»: 1997 թ. Մեղրի-Ահար գծի կառուցումը նպատակ ուներ Իրանից էլեկտրաէներգիա ներկրել, սակայն չվճարումների պատճառով մատակարարումը դադարեցվել է: 1998 թ. պարտքերը մարելուց հետո սկսվել է համագործակցության նոր փուլ, երբ երկու երկրները կատարում են էլեկտրաէներգիայի փոխանակում. Իրանը Հայաստանից տանում է իր համար դեֆիցիտային գարուն-ամառ շրջանում, ՀՀ-ն տվածը ետ է ստանում ծմռանը: Սա թույլ է տալիս ՀԱԷԿ-ին աշխատել անհրաժեշտ բեռնվածությունը, որը, փաստորեն, ծմռանը հանրապետությանն է տալիս ոչ միայն արտադրած, այլեւ հարեւան երկրում «կուտակած» էլեկտրաէներգիա:

Իրանի էներգահամակարգը 19 անգամ մեծ է հայաստանյանից եւ զուգահեռ աշխատանքը, ըստ «Հայէներգոյի» տնօրենի, թե հզորության, թե անվտանգության, թե տնտեսական ու տեխնիկական տեսանկյուններից տալիս են մեծ արդյունքներ: Այժմ երկկողմ հարաբերությունները թեւակոխել են նոր առեւտրային փուլ: Իրանն ունի գնորդների լավ ներուժ Իրաք, Թուրքիա, Պակիստան, Թուրքմենստան, ինչը չի կարող հաշվի չառնվել ՀՀ հեռանկարային ծրագրերի մեջ: Լավ համակցություն կարող է տալ Հայաստան-Իրան-Թուրքմենստան կապը, նամանավանդ որ վերջինը գազի գլխավոր մատակարարն է եւ հայկական ադրանների պատրաստական սպառողներից:

Իրանի հարեւան երկրների հետ միջպետական գծերի ուժեղացման, համատեղ արտահանման ծրագրեր են կազմվում ՌԱՕԵՍ եւ «Ռուսէներգոսնոմ» ռուսական ընկերությունների հետ: Ի դեպ, թե իրանական էներգահամակարգը, թե ռուսական ընկերությունները բանակցությունների ընթացքում հաճախ իրենց իրավունքները լիազորում են հայկական էներգահամակարգին որպես գործունյա, հուսալի գործընկերոջ:

Ընդհանրապես, ՌԴ էներգաընկերությունների հետ համագործակցությունն ընդգրկում է լայն շրջանակ. տարածաշրջանում էլեկտրաէներգիայի փոխհոսքերի համակարգված քաղաքականություն, գնային դաշտի որոշում, նորմատիվային դաշտերի համաձայնեցում, դեբիտորական պարտքերը փոխադարձ ակտիվ դարձնելու խնդիրներ եւ այլն:

Պոտենցիալ շուկա է նաեւ Թուրքիան, որը դեֆիցիտային երկիր է: Այստեղից եւ Իրանից բավականին բարձր գներով էլեկտրաէներգիա է ներկրում Նախիջեւանը, ուստի, ըստ Կարեն Կարապետյանի, քաղաքական խնդիրների հարթումից հետո, սպառման նոր դաշտ կստեղծվի: Ի դեպ, դեպի Թուրքիա տանող գիծը Հայաստանի տարածքում լրիվ աշխատունակ վիճակում է, մինչդեռ թուրքական հատվածի առնչությամբ «Հայէներգոյի» տնօրենը տեղեկություն դժվարացավ հաղորդել:

Տարածաշրջանային առումով մեծ հեռանկար է խոստանում Անդրկովկասի միացյալ դիսպետչերական վարչության հիման վրա ձեւավորված ՊՕՆՏՕՅԼ բաժնետիրական ընկերությունը, որին անդամակցում են ՌԱՕԵՍ-ը՝ 40 տոկոսով, «Սաքէներգոն», «Ազերէներջին» եւ «Հայէներգոն» 20 տոկոս փայաբաժնով: Այն դեռեւս անհրաժեշտ տնտեսատեխնիկական արդյունք չի տալիս, քանզի զուգահեռ աշխատանքը հնարավոր է միայն չորս երկրների համաձայնությամբ: Հայաստանն այստեղ ամենակարգապահ վճարողն է եւ դեբիտորական պարտքերով ու արդյունային առաքումով փակել է իր փայաբաժինը:

«Հայէներգոն» աշխույժ դիրքորոշում ունի նաեւ ԱՊՀ երկրների էլեկտրաէներգետիկական խորհրդում: Այստեղ քննարկվում է նոր հավակնային կենտրոն ստեղծելու առաջարկը, որը կնպաստի միջպետական պարտքերի մարմանն, անհրաժեշտ ինֆորմացիայի կուտակմանը, վճարների եւ մատակարարումների հարցերի կարգավորմանը:

Անդրադառնալով էլեկտրաէներգիայի արտահանմանը խանգարող հանգամանքներին, «Հայէներգոյի» տնօրենը նշեց, որ երկրում խնդիրներ կան լուծելու կապված քվոտավորման, ներքին շուկայի կայունացման, գների ձեւավորման, տնտեսական շահավետության եւ այլ հարցերի հետ:

ՀՐԱՏ ՀՈՐՅԱՆ

ՀԱՍԱՌՈՏ

Եվրամիությունը պատժամիջոցնե՞ր է սահմանում Ռուսաստանի նկատմամբ

ԲՐՅՈՒՍԵԼ, 25 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Արտաքին գործերի նախարարների մակարդակով երկուշաբթի օրը Բրյուսելում նիստ գումարած Եվրամիության խորհուրդը մտահոգություն է հայտնել Չեչնիայում բռնության շարունակման առթիվ: Խորհուրդը Եվրահանձնաժողովին հանձնարարական է տվել մի շարք միջոցներ մշակել, որոնք կարտահայտեն Եվրամիության մտահոգությունը:

Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, դրանց թվում գլխավորը կարելի է համարել Ռուսաստանին տեխնիկական աջակցություն ցույց տալու ծրագրի (ՏԱՍԻՍ) այն նախագծերի վերակողմնորոշումը, որոնք անմիջականորեն կապված են ժողովրդավարության զարգացման, մարդասիրական օգնության եւ խաղաղաշնչական հատարակության կառուցման հետ: Ինչպես ամփոփիչ մամլո ասուլիսի ժամանակ նշել է Եվրահանձնաժողովի անդամ Քրիստոֆեր Պատենը, այս միջոցը կարող է հանգեցնել այն 130 միլիոն եվրոյից մոտավորապես 90 միլիոնի սառեցմանը, որոնք այս տարի ՏԱՍԻՍ-ի բյուջեով նախատեսված են Ռուսաստանի համար: Որոշված է նաեւ 2000 թվական չփոխանցել անցյալ տարի Ռուսաստանի կողմից չօգտագործված 30 միլիոն եվրոն պարենային օգնության համար Եվրամիության հատկացրած վարկերից:

Միջազգային արժութային հիմնադրամը կարող է դադարեցնել իր գործունեությունը

ԼՈՆԴՈՆ, 25 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Առաջատար ինդուստրիալ երկրները ծեռնամուխ են եղել Միջազգային արժութային հիմնադրամի աշխատանքի սկզբունքների ու եղանակների համապարփակ վերանայմանը, ինչը կարող է փաստորեն հանգեցնել այդ խոշորագույն համաշխարհային ֆինանսական կազմակերպության գործունեության դադարեցմանը մի քանի ամսով: Ինչպես ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին հայտնի է դարձել բրիտանական աղբյուրներից, ՄԱՀ-ի լայն բարենորոգման մասին որոշումը համաձայնեցվել էր «յոթնյակի» ֆինանսների նախարարների օրերս Տոկիոյում ավարտված հանդիպման ընթացքում:

ՄԱՀ-ի բարենորոգումը ծեռնարկվել է ԱՄՆ-ի եռանդուն ճնշման ներքո եւ տարվում է այն հունով, որն անցյալ տարվա աշնանը մշակվել էր ԱՄՆ-ի ֆինանսների նախարար Լոուրենս Սամերսի ղեկավարությամբ: Նրանով նախատեսվում է սահմանափակումներ մտցնել զարգացող երկրների տնտեսությունների երկարաժամկետ ֆինանսավորման՝ Համաշխարհային բանկի եւ հիմնադրամի միջոցներ մատակարարելու համար: Ինչպես հաղորդում են աղբյուրները, բարենորոգումը «առավել խոր բնույթ է կրում, քան սկզբնապես առաջարկվում էր Վաշինգտոնի կողմից, եւ ՄԱՀ-ի համար դրա հետեւանքները դեռեւս լիովին պարզ չեն»:

ԱՄՆ նախագահի պաշտոնի հիմնական հավակնորդները հայտնի են

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 25 ՀՈՒՆՎԱՐ, ՄՆԱՐՔ: Ամերիկայի Այովա նահանգում հանրապետականները եւ դեմոկրատները ժողով են անցկացրել՝ նպատակաուղղված ԱՄՆ-ում նոյեմբերին կայանալիք նախագահական ընտրությունների թեկնածուների առաջադրմանը: Հանրապետականները, ինչպես եւ սպասվում էր, քվեարկել են Տեխասի նահանգի նահանգապետ Ջորջ Բուշ կրտսերի օգտին, իսկ դեմոկրատները նախագահի պաշտոնում առաջադրել են ԱՄՆ փոխնախագահ Ալբերտ Գորի թեկնածությունը, որն առաջ է անցել իր հիմնական հակառակորդ, նախկին սենատոր Բիլ Բրեդլիին: Հետագա երկու ամիսների ընթացքում թեկնածուներ կառաջադրվեն նաեւ մյուս նահանգներում: Բուշի ամենալուրջ հակառակորդը՝ հանրապետական սենատոր Ջոն Մակկեյնը, արտավին կմիանա փետրվարին:

ԴԱՎ-ը կործանում է մի ամբողջ մայրցամաք

Միջազգային համաձարակ լինելով հանդերձ, ԴԱՎ-ն այնուամենայնիվ առավել խոշոր ավերածություններ է գործում Հարավային Աֆրիկայում, որտեղ, ըստ «Նյուզուիքի» այս տարվա առաջին՝ հունվարի 3-ի բացառիկ համարի տվյալների, նախատեսվում է 3.8 միլիոն նոր վարակվածների գրանցում, համեմատած 44 հազար դեպքերի հետ՝ Հյուսիսային Ամերիկայում: Միջազգային կազմակերպությունների ցուցանիշներով այդ թիվը կազմում է ընդհանուր վարակվածների 70 տոկոսը: Եվ քանի որ Աֆրիկայում վարակվածների մեջ անհամեմատ մեծ թիվ են կազմում կանայք (55 տոկոս, արեւմուտքի 20 տոկոսի դիմաց), մասնագետները նոր մարտահրավեր են կանխատեսում մայրցամաքին, որտեղ մինչեւ 2010 թ. ԴԱՎ-ի հետեւանքով ծնողազուրկ դարձած որբերի թիվը աճելու է մինչեւ 2,5 միլիոնի: Մինչեւ 2001 թ. ավարտը 13 միլիոն երեխաներ ամբողջ Աֆրիկայում կորցնելու են ծնողներից մեկին կամ երկուսին: Որբերը հավանաբար թերսնուցումից եւ թերսուցումից կտառապեն: Առավել վտանգված երկրներից են Փղոսկրե Ափը, որտեղ ԴԱՎ-ով վարակված ընտանիքների եկամուտները 50 տոկոսով նվազել են, Քենիան, որտեղ միայն մի քաղաքում՝ Կիսուսուում, կատարված ստուգումների արդյունքներով երիտասարդ կանանց 23 տոկոսը վարակված է, Բոտսվանան, որտեղ չորս տղամարդկանցից մեկը վիրուսակիր է, Հարավային Աֆրիկայի Հանրապետությունը, որտեղ կանխատեսվում է, որ բնակչության կեսն էլ չի հասնի 60 տարեկանին, Նամիբիան, Զիմբաբվեն, Զամբիան եւ Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետությունը:

Հ. Ծ.

Մշակույթ

«Առանց ոգեւորության ոչինչ չեմ նկարել...»

Հանդիպում Էդուարդ Իսաբեկյանի հետ

Մշակույթի հայկական ֆոնդի հյուրն էր վաստակաւոր նկարիչ, հեղինակ Էդուարդ Իսաբեկյանը: Նկարչի արվեստը բարձր գնահատեց եւ ծննդյան 85-ամյակը շնորհավորեց ՄՀՖ նախագահ Արեւաս Ավագյանը:

– Դժվարանում եմ խոսել, անկեղծացավ ալեհեր նկարիչն ու շարունակեց՝ ոչ մի բան չեմ կարողանում վերջացնել, այնքան լավ չեն տեսնում, դժվարանում եմ նկարել, բայց գրում եմ, գրում եմ նրանց մասին, ում մասին ինչ է գրվել կամ չի գրվել՝ Կամո Սիմոնյանի, Հակոբ Կոջոյանի, Ակսել Բակունցի: Բակունցը հոգուս մորմոն է, նա ինձ համար գեղարդ էր ու պաշտամունք: Գիտեինք՝ կեսօրին իջնում է Ասաֆյանով «Սեւան» հյուրանոց, եւ մենք օրը մի քանի անգամ բարեւում էինք նրան: Ինձ դաստիարակել են ոչ թե նկարիչները, այլ մեր գրողները՝ Ռաֆֆին, Թումանյանը, Չարենցն ու Բակունցը: Նկարել սկսեցի, երբ դպրոցում հանձնարարականներ էին տալիս պատի թերթը ձեւավորելու համար, այնուհետեւ գործուղեցին նկարչական տեխնիկում, հետո՝ Թիֆլիսի ակադեմիա...

Վարդեսի ավելի քան հազար գործերից ամենասիրելիները 10-20-ն են՝ «Պատասխան Հազկերտին», «Դավիթ-Բեկ», «Հաղթության գյուղացիների արտասանությունը», «Աղավնոս», «Մայրիկի դիմանկարը» եւ այլն, իսկ սիրած զբաղմունքը՝ վաղ առավոտյան վազքն ու նախավարժանքն է լճի ափին:

- Իմ առաջին գործը, շարունակում-է Իսաբեկյանը, «Պավլիկ Սորոգովն» էր: Երբ նկարում էի, ներս մտավ Ռոմանոս Մելիքյանը եւ ասաց՝ վառ գույներ, վառ գույներ գործածիր, իսկ ես ներկեր չունեի: Իմ բոլոր գործերում մարդն է, հիշում է նկարիչը:

Վարդեսի ադրած 85 տարիների ընթացքում մի քանի անգամ բարեւում էինք նրան: Ինձ դաստիարակել են ոչ թե նկարիչները, այլ մեր գրողները՝ Ռաֆֆին, Թումանյանը, Չարենցն ու Բակունցը: Նկարել սկսեցի, երբ դպրոցում հանձնարարականներ էին տալիս պատի թերթը ձեւավորելու համար, այնուհետեւ գործուղեցին նկարչական տեխնիկում, հետո՝ Թիֆլիսի ակադեմիա...

Վարդեսի ավելի քան հազար գործերից ամենասիրելիները 10-20-ն են՝ «Պատասխան Հազկերտին», «Դավիթ-Բեկ», «Հաղթության գյուղացիների արտասանությունը», «Աղավնոս», «Մայրիկի դիմանկարը» եւ այլն, իսկ սիրած զբաղմունքը՝ վաղ առավոտյան վազքն ու նախավարժանքն է լճի ափին:

- Իմ առաջին գործը, շարունակում-է Իսաբեկյանը, «Պավլիկ Սորոգովն» էր: Երբ նկարում էի, ներս մտավ Ռոմանոս Մելիքյանը եւ ասաց՝ վառ գույներ, վառ գույներ գործածիր, իսկ ես ներկեր չունեի: Իմ բոլոր գործերում մարդն է, հիշում է նկարիչը:

Վարդեսի ադրած 85 տարիների վկան վաստակն է (չնայած նկարներից իր մոտ ոչինչ չի մնացել, միայն որոշ արտատպություններ): Ունեցել է անհատական բազմաթիվ ցուցահանդեսներ Սիրիայում, Մարոկկոյում, Թիֆլիսում: Վերջինը, տարիներ առաջ, Հոլիվուդում էր: Իրոք, գնահատվել է նրա վաստակը՝ ունի ժողովրդական նկարչի կոչում եւ մի շարք պարգեւներ: Բաժբեուկ Մելիքյանին համարում է իր ուսուցիչը, իսկ ամենից շատ հավանում է Կոջոյանին, իր իսկ խոսքերով «Կոջոյանն ինչի ձեռք էր տալիս՝ արվեստի գործ էր դառնում»: Իմ հարցին՝ մեր մեծերին անվերջ մեծարելը չի՞ սպասել արդյոք Կոջոյանին, վարդեսը պատասխանեց. «Թերեւս, սակայն ժամանակն ամեն ինչ իր տեղը կդնի»:

– Ի՞նչն է ամենից շատ Ձեզ ոգեշնչել:

- Գրականությունը: Ինձ ասում են, որ ազդվել եմ ֆրանսիացի նկարիչներից, մինչդեռ մեծ է Արամ Խաչատրյանի ստեղծագործությունների ազդեցությունը:

– Անհատ ժամանակներում հա՞ճախ եք աղրել:

- Հաճախ մարդու անուն երբեք չեմ ունեցել, հակառակը՝ «հուշաթ» էին ասում, միշտ հակադրվում էի: Դժվար տարիներին ուսանող էի, երեւի դա էր պատճառը, թե չէ ինձ էլ կտանեին:

– Շարված գործերի մասին ի՞նչ կասեք:

- Մի անգամ Երվանդ Քոչարն ասաց՝ պատ տվեք Իսաբեկյանին: Ես պատրաստ էի որոնանկարներ անելու, բայց պատ չտվին: Եթե պատվեր չլինի, նկարիչը էսքիզներից բացի ոչինչ չի անի...

Կուզեի լինել այգեգործ ու գինեգործ: Կստեղծեի աշխարհի ամենալավ գինիներն ու կիյուրասիրեի, որ մարդիկ խմեին ու խենթանային: Հիշում եմ «Ֆլորայի» այգու այգեպանին, որը կրթություն էր ստացել Գերմանիայում, խաղողի հիանալի տեսակներ էր աճեցնում եւ բաժանում բոլորին:

Անվանի նկարիչը հիշեց նաեւ Թիֆլիսի այն գինարբուքը, որ կազմակերպել էր ուսանող ժամանակ, երբ իր ցուցահանդեսից հայտնի նկարիչ Լադո Գուդիաշվիլին նկար էր գնել եւ լավ վճարել:

- Իմ բոլոր ընկերները հիմա չկան,- հանկարծ դառնացած նկատեց նկարիչը:

Իսկ հուշերում կրկին ու կրկին հին Երեւանն էր եւ հարազատ Իգդիրը, որի անմեռ կարոտն առնում է գեղեցկադեմ Աշտարակից, ուր հաճախ է լինում նկարիչ Խորենյանի մոտ:

ԳՈՌԱՐ ԱԲՐԱՄՅԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Գիրք, որ մտորելու առիթ է տալիս

Երեւանի «Սոլոն» հրատարակչությունը վերջերս լույս ընծայեց ճանաչված արձակագիր, հրապարակախոս, լրագրող Մարգո Ղուկասյանի «Ո՞ւր է կղզյակն Սեւանա» ակնարկների ժողովածուն, որը հեղինակի թվով վեցերորդ գիրքն է: Թեեւ Մարգո Ղուկասյանն ընթերցողին ծանոթ է «Գարուն» ամսագրում տպագրված բազմաթիվ ակնարկներով, ուղեգրություններով, էսսեներով, մեր ժողովրդին հուզող տարբեր հիմնահարցերին եւ, ամենից շատ, բնապահպանությանը վերաբերող հոդվածներով, սակայն տարիների ընթացքում հավաքած արժեքավոր նյութը հեղինակը համալրել ու հարստացրել է դրան տալով ժամանակակից հնչեղություն, որը թելադրված է Հայաստանում բնապահպանության ճգնաժամային ներկա իրավիճակով:

Առանց երկմտելու կարելի է ասել, որ Մ. Ղուկասյանի նոր գրքի լույսընծայումն ունի երկու հիմնական նպատակ: Առաջին՝ մատաղ սերնդի մեջ սեր ու ջերմություն ներարկել հայրենի բնաբխարհի նկատմամբ: Այդ առումով գիրքը կարելի է բնապահպանության ձեռնարկ համարել եւ շրջանառության մեջ դնել հանրակրթական համակարգում:

Գրքի երկրորդ, խիստ կարեւոր արժանիքն այն է, որ հեղինակն իր խոհերը ընթերցողի հետ կիսում է չափազանց դժվար, մեզ վանգ սպառնացող մի ժամանակաշրջանում, երբ մենք ականատես ենք լինում, թե ինչպիսի արագությամբ է աղետի ենթարկվում մեր բնությունը, ինչպես է հալվում ու մաշվում մեր գոյության եւ պոգաա գոյատեւման թերեւս ամենաթանկ մասունքը՝ Սեւանա լիճը, ինչպես են հատվում անտառները՝ առիթ տալով ավերիչ հետեւանքներ ունեցող հողմահարումների, ինչպես են մեր աչքի առջեւ բարբարոսաբար վերանում բուսական ու կենդանական աշխարհի արժեքավոր ու հազվագյուտ տեսակներ մեկընդմիշտ տեղ գտնելով Հայաստանի «Կարմիր գրքում»:

Ինչի մասին էլ գրելիս լինի Մարգո Ղուկասյանը, առաջին հերթին նրան առաջնորդում է հայրենասիրության զգացումը: Նրա ակնարկներում արծարծված բնապահպանական հարցերը ամենեւին էլ անձնական շահեր չեն հետապնդում, այլ խտացած են համազգային հոգսերով ու տագնապով: Նա ցավով է զրում Արթիկի Տուֆաշեն գյուղի քարաբեկորների ու քարհանքերի տակ վաղուց անհետացած «Հորթերի աղբյուրի», Ծաղկաձորի ցեմենտի եւ Ալավերդու պղնձամոլիբդենային գործարանների բնությանը հասցրած սոսկալի վնասների մասին:

Մ. Ղուկասյանի ակնարկների հերոսները մարդիկ չեն լոկ: Բնությունը անձնավորելու նրա վարպետության շնորհիվ է, գուցե, որ գրքի հերոսներ են դարձել նաեւ բույսերն ու կենդանիները: Ի՞նչ հիացմունքով է նկարագրում նա ծաղկող մագնոլիան ու շեղագույն հիրիկը, ջրաշուանները ու փեսրախոտերը, հրաշքով փրկված լիբանանյան 400 հինավուրց մայրիները եւ ի՞նչ ափսոսանքով է նշում, որ բուսաբխարհին անգիտակ մարդիկ ժամանակին անբարյացակամ են վերաբերվել ու մեծ վնասներ հասցրել բնությանը: Անպի՞տ ցավ է առիթ հանդիսանում՝ նկատելով, որ Հայաստանի առանց այն էլ հողազուրկ պայմաններում արժեքավոր շատ վարելահողերի տարածքներում շինարարական աշխատանքներն իրականացվում: Չմոռանանք, սակայն, որ բնությունը չի ստեղծված նրանից միայն ակնկալելու եւ շռայլորեն օգտվելու համար: Բնությունը վերարտադրության կարիք ունի եւ յուրաքանչյուրիս պարտքն է գործուն մասնակցություն ունենալ նրա պահպանությանը:

Բարի նախանշանով է նշում գրքի հեղինակը, թե ինչպիսի աշխատանք կա բնության նկատմամբ արտասահմանյան շատ երկրներում: Բավական է բերել լիբանանյան մայրիների օրինակը: Մայրին այս երկրի խորհրդանիշն է, որը պաշտպանվում համարվելուց զատ պատկերված է նաեւ Լիբանանի գերբին: Փաստն ինքնին խոսուն է: Իսկ ի՞նչն է խանգարում մեզ՝ հայերիս, խոպոտ վերացման վտանգից փրկել այնքա՞ն ինքուս ու բարեհունչ անուն ունեցող, դեռ հրաշքով պահպանված շեղագույն հիրիկը, որով անգամ այլազգի բուսաբաններն են հիացել՝ փորձելով բնիկ հայկական այս ծաղկատեսակը կլիմայավարժեցնել օտար ափերում:

Մարգո Ղուկասյանի գիրքը բնապահպանության ձեռնարկ լինելուց զատ հայրենասիրության իսկական դասագիրք է, որովհետեւ միայն գորով ու գենով չէ, որ կարելի է պաշտպանել հայրենիքը: Չէ՞ որ հայրենիք ասածը առաջին հերթին մեր լեռներն են, անտառները, լճերը, գետերը, բույսերն ու կենդանիները, ծառուղիներ ու անծառուղիներ հուշարձանները:

Բ. ՎԱՂՈՒՆԻ

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Անանշնական մասունքներ

Գրողը իր փաստաթղթերը հանձնեց արխիվին



Անվանի գրող Նորայր Ադալյանը ՀՀ կառավարությանն առընթեր գլխավոր արխիվային վարչության Արվեստի, գրականության եւ մամուլի փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվին օրերս հանձնեց իր անձնական հավաքածուն, որն ընդգրկում է շուրջ 7.000 թերթ՝ գրողի կյանքի փաստաթղթեր ու վավերագրեր, գեղարվեստական ստեղծագործությունների ձեռագրեր, ընծայագրեր, մամուլի հրապարակումներ, լուսանկարներ, գրքեր, նամակների եւ այլ նյութեր, որոնք ոչ միայն առնչվում են նրա անձին, այլեւ ունեն հետաքրքիր գրական ու հասարակական բովանդակություն:

Աշխատելով «Գրական թերթի» գլխավոր խմբագիր, ապա եւ ՀՊՄ վարչության քարտուղար, Ն. Ադալյանը լայն շփումներ է ունեցել հայրենի, սփյուռքահայ եւ ռուս գրական դեմքերի հետ, որոնք ներկա են նրա արխիվում: Այստեղ մի որոշ կրտսածով արտահայտված է 70-80-ական թվականների հայ գրական կյանքը բնորոշ նշաններով: «Խաղաղ զորանոցներ», «Գիշերը չի լուսանում, «Դավայաթաղ», «Ապոկալիպսիս», «Փոխակերպություն», «Ճայը» վեպերի ու վիպակների, բազմաթիվ պատմվածքների, զեկուցումների, քննադատական, բանավիճային ու հրապարակախոսական հոդվածների, «Թոթովենց» աշխատության, որի համար գրողին շնորհվեց բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, ձեռագրերը էական տեղեկություններ են հաղորդում Ադալյանի ստեղծագործական խոհանոցի, նրա գեղարվեստական, ազգային ու հասարակական որոնումների մասին, որոնք բնորոշում են նաեւ տվյալ ժամանակաշրջանի հայոց գրական ու մշակութային շարժումները:

Նորայր Ադալյանի արխիվում, ի թիվս մասամբ նշվածների, նաեւ դասական էջեր կան: Բավական է հիշել Գուրգեն Մահարու Պարանգայից նրան հղած 17 ձեռագիր նամակները, ինչպես նաեւ մեկական նամակ Նաիրի Զարյանից եւ Մկրտիչ Արմենից: Ադալյանը մեր պետական արխիվին ի պահ է տվել տասնամյակների ընթացքում իր մասին գրված ոչ միայն դրական, այլեւ բացասական բոլոր հոդվածները, որոնք մի ամբողջ հատոր կարող են կազմել, դրանով իսկ գիտակցաբար իրեն ներկայացնելով այնպես, ինչպես ինքն ընկալվել է գրական կյանքում, ոչինչ չավելացնելով եւ չպակասեցնելով, իր ժողովրդի եւ հայրենի գրականության հանդեպ գրողի բարձր պատասխանատվությամբ ու բարոյականությամբ, նորերին հնարավորություն տալով իրեն եւ իր ճնշադատներին ազատորեն դատելու:

– Արխիվը սուրբ ասպարեզ է, այն մեր ժողովրդի հիշողությունն է, որն այնքան անհրաժեշտ է ամեն եկող սերնդին, նվիրատվության հանդիսավոր արարողության ժամանակ ասաց գրողը, շնորհակալություն հայտնելով Գլխավոր արխիվային վարչության պետ Հարություն Ֆելեքյանին, Արվեստի, գրականության եւ մամուլի կենտրոնական արխիվի տնօրեն Սանդրո Բեհբուդյանին, փոխտնօրեն Բելլա Ավետիսյանին, արխիվի բոլոր աշխատողներին, որոնք իրենց բանիմաց եւ նվիրյալ աշխատանքով, ներկայիս դժվարին պայմաններում անգամ, բարձր են պահում Հայաստանի այս կարեւորագույն գիտական եւ մշակութային օջախի անուն-պատիվը:

Հարգելի Նորայր Ադալյան, «Համոզված եղեք, որ այդ փաստաթղթերը կօգտագործվեն հայրենի գիտության ու մշակույթի զարգացման համար», ասված է գրողին հանձնված «Շնորհակալագրում»:

Հանդիսավոր արարողությանը ներկա էին գրողներ, արվեստագետներ, մամուլի, հեռուստատեսության եւ ռադիոյի ներկայացուցիչներ:

ՄԵՐԳԵՆ ԳԱԼՈՅԱՆ

«Կարագոզյանը» վերանորոգված

Պոլսի հիմնովին վերանորոգված Կարագոզյան վարժարանը հիացմունք է պատճառել բոլոր նրանց, ովքեր դեկտեմբերի 11-ին ներկա են եղել պատանական բացման արարողությանը, հաղորդում է Փարիզի «Յառաջ» օրաթերթը: Բարի գալուստի խոսք է ասել տնօրենուհին՝ տիկին Արմավենի Միրոյլուն: Ուրբանյոթ տարվա վարժարանում այսօր սովորում են 180 աշակերտներ, կրթական անձնակազմը բաղկացած է 23 ուսուցիչներից եւ 8 հսկիչներից:

Պատանական արարողությունից հետո տեղի է ունեցել ընդունելություն Կարագոզյան Սանուց միության հանդիսասրահում: Վարժարանի վերանորոգումը իրականություն է դարձել շնորհիվ Շիելիի խաղաքաղաքացու եւ երկու բարեգործների՝ էրկին Բերբերոյլու եւ Տիգրան Գուլմեզգիլի:

ՕՐՎԱՅՈՒՅՑ

Հունվարի 26

- 1763 թ. ծնվել է ժան Բապտիստ Բեռնադոտը: Նապոլեոնի բանակում նա դիվիզիայի գեներալ էր: Մի քանի հաջող մարտական գործողություններից հետո Նապոլեոնը նրան մարշալի կոչում տվեց: 1810 թ. Բեռնադոտն ազատել է շվեդ գերիներին, որի պատճառով շնորհազրկվել եւ վտարվել է բանակից: Շուտով Շվեդիայի թագակալը (խորհրդարանը), որտեղ Բեռնադոտը հանրաճանաչ էր, նրան ընտրեց գահի ժառանգորդ: 1818-1844 թթ. նա Շվեդիայի թագավորն էր եւ սկիզբ դրեց Բեռնադոտների դինաստիային, որը թագավորում է Շվեդիայում առ այսօր:
- 1823 թ. մահացել է անգլիացի բժիշկ էդուարդ Ջենները, որը ծաղկահատման հիմնադիրն է: 1769 թ. նա ծաղիկով հիվանդ կովի հատվածքներ ներարկեց 8-ամյա Ջեյմս Ֆինսին, իսկ ամիսուկես անց նրան պատվաստեց արդեն հիվանդ մարդու հարուցիչը: Տղան ծաղիկով չհիվանդացավ, իսկ գիտնականն առաջարկեց ծաղկի դեմ նախազգուշական պատվաստման բարձր արդյունավետությունը:
- 1909 թ. ծնվել է հայ նկարիչ Մեր Աբեղյանը: Նրա բազմաժանր ստեղծագործությունն ինքնատիպ է ու յուրօրինակ, այն ձեւավորվել է ազգանում մոնումենտալությամբ, գունագեղությամբ: Դրանք էպիկական են ու դեկորատիվ:
- 1918 թ. ծնվել է ռումինացի քաղաքական գործիչ Նիկոլաե Չաուշեսկուն:
- 1924 թ. ծնվել է հայ մեծ բանաստեղծ եւ գրականագետ Պարույր Սեւակը: Նա անգնահատելի հետք է թողել հայ գրականության ու պոեզիայի պատմության մեջ:
- Այս օրը հին հայկական տոմարով Արաց ամսվա նոպաս օրն է:

ՆԱՐԲԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԱԶԳ

Մարզական

ԸՄԲՇԱՄԱՐՏ

Մրցանակներ Իրանի միջազգայինում

Իրանի Կազվին քաղաքում անցկացվեց նշանավոր մարզիկ Թախտիի հուշամրցաշարը, որին 9 երկրների հունահռոմեական եւ ազատ ոճերի ըմբիշներ էին մասնակցում: Ավանդական այս մրցումներում, որոնք պատկանում էին ՖԻԼԱ-ի «Մեծ մրցանակ» շարքին, հանդես եկան նաեւ Հայաստանի ըմբիշները:

Առավել հաջող էր հունահռոմեական ոճի հավաքականի մրցելույթը: Մեր յոթ ըմբիշներից երկուսը գյումրեցի Արա Գրիգորյանը (69 կգ) եւ էջմիածնեցի Հայկազ Գալստյանը (130 կգ) իրենց քաշային կարգերում երրորդ տեղ գրավեցին եւ արժանացան բրոնզե պարգեւների: Թիմային պայքարում մեր հավաքականը, թեեւ հանդես էր գալիս ոչ լրիվ կազմով, գրավեց պատվավոր երկրորդ տեղը՝ հաղթանակը զիջելով իրանցիներին:

Եթե հունահռոմեական ոճի ըմբիշների թիմը փորձի եւ երիտասարդության միաձուլում էր, ապա ազատ ոճի հավաքականը կազմված էր հիմնականում երիտասարդ, հեռանկարային մարզիկներից: Թիմի 10 անդամներից ոչ մեկին չհաջողվեց մրցանակակիր դառնալ, բայց հավասար ելույթների շնորհիվ մեր հավաքականը գրավեց երրորդ տեղը, ինչը հաջողություն պետք է համարել: Մեզանից առաջ անցան միայն Իրանի եւ ԱՄՆ-ի բավականին ուժեղ թիմերը:

Հուշամրցաշարը սպասարկող մրցավարների թվում էին նաեւ Հայաստանի երեք ներկայացուցիչներ միջազգային կարգի մրցավարներ Ասոն Խաչատրյանը, Լեւոն Վարդանյանը եւ Գեւորգ Ալեքսանյանը: Նրանց ախտաանիշը բարձր գնահատականի արժանացավ մրցումների կազմակերպիչների, մասնակիցների կողմից: Շատ կարեւորագույն գոտեմարտեր վստահվում էին հենց նրանց, հատկապես Խաչատրյանին:

– Թախտիի հուշամրցաշարը շատ օգտակար էր մեր երկու հավաքականների երիտասարդ ըմբիշների համար, գրույցի ժամանակ ասաց Հայաստանի մարզական պատվիրակության ղեկավար, վաստակավոր մարզիչ Հարություն Խաչատրյանը: Մրցակցությունը շատ լուրջ էր, ուժեղագույն ըմբիշներով էին ներկայացել հատկապես Իրանի, ԱՄՆ-ի հավաքականները, մյուս թիմերի կազմերում էլ ընգրկված են հարուստ մրցափորձ ունեցող ըմբիշներ: Եվ պետք է ուրախությամբ նշեմ, որ մեր երիտասարդներն իրենց լավ դրսեւորեցին այդ կարեւոր սուղգաստում: Գիտեմ, այդ մրցումները կարող էին անցնել նաեւ առանց մեզ, ավելացնում է պրն Խաչատրյանը: Բանն այն է, որ մեր ճանապարհ ընկնելուց հետո եղանակային պայմանները շատ վատացան: Երբ մոտավորապես 15 կմ էր մնացել մինչեւ Կաթան, մեր ավտոբուսը դուրս պրծավ մայրուղուց եւ... վայր սահեց զառիթափով: Այդպես բավականին «գնացինք», եւ միայն զարմանալ կարելի է, թե ինչպես մեքենան չշրջվեց եւ ինչ-որ հրաշքով կանգ առավ: Երբ ավտոբուսից իջանք, պարզապես զարհուրեցինք. գտնվում էինք անդնդախոր կիրճի ծոնկից ընդամենը մի քանի մետր հեռավորության վրա: Շուտով մեզ հայտնաբերեցին եւ օգնության հասան: Տեղափոխվեցինք Կաթան, որտեղ մեզ ամենայն աջակցություն ցույց տրվեց: Օգտվելով թերթի ընձեռած հնարավորությունից, ուզում եմ մեր բոլորի անունից կրկին շնորհակալություն հայտնել Սյունիքի մարզպետին, մարզպետարանի, ոստիկանության, պետավտոտեսչության, ճանապարհային ծառայությունների, հյուրանոցի բոլոր աշխատակիցներին, բոլորին, բոլորին... Գիշերեցինք տեղի հյուրանոցում, իսկ հաջորդ օրը մտածում էինք վերադառնալ Երեւա՞ն, թե՞ շարունակենք ճանապարհը Իրան: Որոշեցինք ետ չդառնալ, եւ ճիշտ վճիռը դա էր:

Ասեմ, որ վերադարձն էլ դժվար էր. ծյուն, քամի, անտեսանելի ճանապարհ... Ոչինչ, դժվարությունները կոփում են:

ՇԱԽՄԱՏ

Լոյտյանն ու Կասպարովը բաժանվեցին խաղաղությամբ

Վեյկ ան Զեեի գերհզոր կազմ ունեցող մրցաշարում անցկացվեցին 8-րդ տուրի հանդիպումները:

Մեզ, իհարկե, առաջին հերթին հետաքրքրում էր մեր Սմբատ Լոյտյանի եւ Ռուսաստանը ներկայացնող Գարի Կասպարովի պարտիան, որտեղ սպիտակ խաղաքարերով խաղում էր երեւանցի շախմատիստը: Սմբատը հավասար պայքար մղեց ահեղ մրցակցի հետ, եւ խաղն ավարտվեց ոչ-ոքի արդյունքով:

Խաղաղ ավարտ ունեցան տուրի եւս հինգ հանդիպումներ. միավոր կիսեցին Պետեր Լեկոն (Հունգարիա) եւ Վլադիմիր Կրամնիկը (Ռուսաստան), Վիշվանաթան Անանդը (Հնդկաստան) եւ Լուկ վան Վելին (Հոլանդիա), Երուն Պիկեսը (Հոլանդիա) եւ Ալեքսանդր Մորոզեւիչը (Ռուսաստան), Յան Թիմանը (Հոլանդիա) եւ Վիկտոր Կորչնոյը (Շվեյցարիա), Պրեդրագ Նիկոլիչը (Բոսնիա-Հերցեգովինա) եւ Հուդիթ Պոլգարը (Հունգարիա):

Շատ ավելի մարտականորեն էին տրամադրված անգլիացի գրոսմայստերներ Նայջել Շորտն ու Մայքլ Ադամսը: Վերջինս, խաղալով սեւերով, կարողացավ խլել նախաձեռնությունը եւ հաղթել մրցակցին:

Ութ տուրից հետո մրցաշարային աղյուսակը շարունակում են գլխավորել Կասպարովն ու Կրամնիկը, որոնք 5,5-ական միավոր են վաստակել: Մյուս մասնակիցներն այսպիսի արդյունքներ ունեն. Անանդ եւ Լեկո՝ 5-ական, Ադամս, Մորոզեւիչ եւ Պիկեսը՝ 4,5-ական, Թիման՝ 4, Շորտ, Նիկոլիչ՝ 3,5-ական, Լոյտյան, Կորչնոյ՝ 3-ական, Պոլգար՝ 2,5, վան Վելի՝ 2 միավոր: Հենց վերջինիս հետ էլ 9-րդ տուրում մրցելու է Լոյտյանը:

Այդ տուրում կհանդիպեն նաեւ Կասպարով-Թիման, Կրամնիկ-Պիկեսը, Ադամս-Անանդ, Մորոզեւիչ-Շորտ, Կորչնոյ-Նիկոլիչ, Պոլգար-Լեկո զույգերը:

Ավելացնենք, որ մրցաշարի ավարտին մնացել է հինգ տուր:



ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է
ՌԱՉՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

ՖՈՒՏԲՈԼ

Ռիվալդոն՝ աշխարհի լավագույն ֆուտբոլիստ

FIFA
For the Good of the Game

Երկուշաբթի օրը Բելգիայի մայրաքաղաք Բրյուսելում կայացավ 1999 թ. աշխարհի լավագույն ֆուտբոլիստի պարգեւատրման հանդիսավոր արարողությունը: Այս անգամ ՖԻՖԱ-ի հարցմանը մասնակցեցին ավելի քան 140 երկրների մասնագետներ: Նրանց մեծ մասը ձայն էր տվել իսպանական «Բարսելոնի» բրազիլացի հարձակվող Ռիվալդոյին: Նա 543 միավոր է հավաքել՝ զգալիորեն առաջ անցնելով մյուս հավակնորդներից: Բրազիլացի գերաստղին հանձնվեց գլխավոր մրցանակը:

Ռիվալդոն (լրիվ անունը՝ Ռիվալդո Վիկտոր Բարբոսա Ֆերեյրա) ծնվել է Բրազիլիայի Ռեսիֆե քաղաքում, 1972 թ. ապրիլի 19-ին: Խաղացել է բրազիլական «Սանտա Կրուզ», «Կորինթիանս», «Պալմեյրաս», իսպանական «Դեպորտիվո լա Կորուն՝ա» թիմերում: 1997-98 մրցաշրջանից հանդես է գալիս «Բարսելոնում»: Ռիվալդոն ֆիզիկական հիանալի տվյալներ ունի. նրա հասակը 1 մ 86 սմ է, քաշը՝ 75 կգ: Բրազիլացին մինչ այդ արժանացել էր նաեւ 1999-ի Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստի կոչմանը: Կիրակի օրը Իսպանիայի առաջնության 21-րդ տուրի «Բարսելոն»-«Ռասինգ» խաղից առաջ «Ֆրանս ֆուտբոլ» հանդեսի տնօրեն Ժերար Էոնոն «Ոսկե գնդակ» մրցանակը հանձնեց Ռիվալդոյին: Ի դեպ, այդ խաղում «Բարսելոնը» հաղթեց 1-0 հաշվով: Միակ գնդակը 19-րդ րոպեին խփեց հենց ինքը՝ հոբելյարը:

ՖԻՖԱ-ԱՐՔԻՎ

Աշխարհի լավագույն ֆուտբոլիստների մրցույթում երկրորդ տեղում է անգլիացի Դեյվիդ Բեքհեմը («Մանչեսթր յունայթեդ»)՝ 194 միավոր, երրորդ մրցանակին արժանացավ արգենտինացի Գաբրիել Բաթիստուտան («Ֆիորենտինա»)՝ 79: Նշենք նաեւ հաջորդ երեք տեղերում գտնվող ֆուտբոլիստներին. ֆրանսիացի Զինեդին Զիդան («Յուվենտուս»)՝ 68, իտալացի Քրիստիան Վիերի («Լացիո»)՝ 39, պորտուգալացի Լուիշ Ֆիգու («Բարսելոն»)՝ 35 միավոր:

Մարզասերներին հիշեցնենք, որ աշխարհի լավագույն ֆուտբոլիստների ընտրություններն անցկացվում են 1991 թվականից: Ահա բոլոր տարիների դափնեկիրների անունները.

1991 թ. Լոթար Մաթեուս (Գերմանիա)
1992 թ. Մարկո վան Բաստեն (Հոլանդիա)
1993 թ. Ռոբերտո Բաջո (Իտալիա)
1994 թ. Ռոմարիո (Բրազիլիա)
1995 թ. Ջորջ Վեա (Լիբերիա)
1996 թ. Ռոնալդո (Բրազիլիա)
1997 թ. Ռոնալդո (Բրազիլիա)
1998 թ. Զինեդին Զիդան (Ֆրանսիա)
1999 թ. Ռիվալդո (Բրազիլիա)

Բրյուսելում ընթացած արարողության ժամանակ հանձնվեցին նաեւ այլ մրցանակներ: Հարցման արդյունքում տարվա լավագույն թիմ է ճանաչվել Բրազիլիայի հավաքականը, թիմ-հայտնագործություն՝ Սլովենիայի հավաքականը, իսկ «արդարացի խաղի համար» մրցանակին արժանացել է Նոր Զելանդիայի հավաքականը:

ՆԱՐԴԻ

Հաջող մրցելույթներ Ստամբուլում

Ստամբուլից վերադարձան Հայաստանի նարդիստները: Վերադարձան հարուստ ավարով: Բակգամոն («կարճ») խաղաձեւի ավանդական միջազգային մրցաշարի մեր վեց մասնակիցներից հինգը մրցանակային տեղեր գրավեցին եւ արժանացան գավաթների:

Ուժեղագույնների խմբում՝ «մասթեր» մրցաշարում, հանդես եկան մեր հանրապետության երեք ներկայացուցիչներ: «Շանսի» եզրափակիչում հաղթանակը վիճարկեցին նրանցից երկուսը՝ Ռուբեն Մարտիրոսյանն՝ ու Ավետիս Ոսկոնյանը: Ավելի ուժեղ գտնվեց Մարտիրոսյանը, որն արժանացավ առաջին մրցանակին, իսկ Ոսկոնյանին բաժին հասավ երկրորդը: «Մասթեր» մրցաշարի հաղթող դարձավ էնգենը (Անգլիա): Նշենք, որ այս մրցաշարին շատ ուժեղ նարդիստներ էին մասնակցում, եւ Հայաստանի մարզիկներն արժանի մրցակցություն ցույց տվեցին անվանիներին: Մասնավորաբար, եզրափակիչի ճանապարհին Մարտիրոսյանը 6-0 հաշվով պարտության մատնեց աշխարհի չեմպիոն, Ստամբուլի 1998, 1999 թթ. մրցաշարերի հաղթող Ջերրի Գրանդերին (Շվեդիա):

Բավականին հաջող էր երկրորդ («ինտերմեդիաս») մրցաշարի մեր միակ մասնակցի Լեւոն Քամալյանի ելույթը: Նա գրավեց երկրորդ տեղը: Քամալյանն իր միակ պարտությունը կրեց եզրափակիչ խաղում, Գերմանիայի ներկայացուցիչ Գրաբովսկուց, որն էլ նվաճեց առաջին մրցանակը:

Երրորդ («բեգիներ») մրցաշարում հանդես եկան Անդրանիկ Հարությունյանն ու Կոլյա Սուսոյանը: Նրանցից առաջինը գրավեց երկրորդ տեղը, իսկ երկրորդը բաժանեց երրորդ-չորրորդ տեղերը: Այս մրցաշարում հաղթող ճանաչվեց Վրաստանի ներկայացուցիչ Տխարելին:

ՍԿԱՆՎՈՐԴ



Կազմեց է. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները

Ուղղահայաց

1. Սեբաստիա: 2. Սիյակ: 3. Անանի: 4. Ալեքսանդր: 6. Մորմոն: 7. Դեսանտ: 10. Կալման: 11. Կանադա: 12. Կառնակ: 16. «Նախաբավիդ»: 17. Գոլուբկինա: 19. Լանովոյ: 20. Գնդացիր: 25. Մասրիկ: 26. Դոլինա: 27. Ամպագոն: 29. Բրեսանտ: 31. Արտոնյալ: 32. Թեոդոս: 33. Օնեգին: 37. Թավիշ: 38. Մամիսի:

Հորիզոնական

5. Բեթոեհեմ: 7. Դոնաթելո: 8. Տավրոս: 9. Լոսանտ: 13. Օտյան: 14. Տոսկանինի: 15. Կարտ: 18. Ամբաս: 21. Գոլնար: 22. Վարդենի: 23. Էքելոն: 24. Մարաբա: 28. Դոլոմիտ: 29. Բաստիլ: 30. Անկարա: 34. Մեթիս: 35. Մեթինյան: 36. Կոստա: 39. Սանդալ: 40. Տիգրան: 41. Անտոնիոս: 42. Նախիջեւան:

ԱԶԳ

Օրվա հետքերով

ՄՈՍԿՎԱ

Կովկասը բարդ տարածաշրջան է

Տեսակետներ են հայտնում նախագահները

Սկիզբը էջ 1

Վ. Պուտին. «Քառյակի» մասնակիցները կգործեն «միջազգային իրավունքի սկզբունքներով»

«Կովկասն առանց չափազանցության աշխարհի ամենաբարդ տարածաշրջաններից մեկն է», նշեց Վլադիմիր Պուտինը:

Անդրադառնալով Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի եւ Ռուսաստանի երկխոսությանը Կովկասի խնդիրների շուրջ, Վլադիմիր Պուտինն ընդգծեց, որ այդ «քառյակի» բոլոր մասնակիցները ելնում են նրանից, որ «տարածաշրջանային ոլորտում իրենց համատեղ աշխատանքը չտեսք է նոր խոչընդոտներ հարուցի» այլ երկրների հետ ունեցած հարաբերություններում: «Մենք կգործենք հայտնի բժշկական սկզբունքով՝ չվնասել», ասաց Վլադիմիր Պուտինը:

Նա ընդգծեց, որ «քառյակի» մասնակիցները կգործեն «միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա, որոնց թվում էականներից մեկը ինքնիշխան պետության տարածքային ամբողջականության բացարձակ ճանաչումն է»:

Ռ. Քոչարյան. «ԱՊՀ-ն պետք է ավելի արդյունավետ աշխատի»

ԱՊՀ անդամ երկրների ղեկավարների խորհրդի նիստի արդյունքներին նվիրված այսօրվա մամլո ասուլիսի մի շարք մասնակիցներ հանդես եկան Համագործակցության նկատմամբ քննադատական դիտողություններով:

Մասնավորապես, ինչպես հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը, Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանն այն կարծիքն է հայտնել, որ գագաթաժողովում բանավեճերը ցույց տվեցին, որ Համագործակցությունը պետք է ավելի արդյունավետ աշխատի այնպիսի ուղղություններով, ինչպիսիք են անվտանգության ապահովումն ու պայքարն ահաբեկչության դեմ, ինչպես նաեւ ԱՊՀ անդամ երկրների տնտեսական ինտեգրացման իրականացումը: «Ինտեգրացման գործընթացները, ասել է նա, պետք է իրականացվեն ինքնաղեկասարքի (ավտոպիլոտի) ռեժիմով, բայց ապրանքաշրջանառության ցուցանիշներն ասում են հակառակը. առայժմ տնտեսական ապաինտեգրացում է տեղի ունենում»:

Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն ուշադրություն է հրավիրել այն թերության վրա, որ «ընդունվում են լավ որոշումներ, բայց դրանք չեն կատարվում»: Նրա կարծիքով, դա առաջին հերթին վերաբերում է տնտեսական ինտեգրացման իրականացմանը եւ ԱՊՀ շրջանակներում ազատ առեւտրի գոտու ստեղծմանը:

Հ. Ալիեւն առաջնահերթ է համարում հակամարտության կարգավորումը

Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը մամլո ասուլիսում անդրադառնալով Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի եւ Ռուսաստանի ղեկավարների՝ Կովկասի հիմնախնդիրներին նվիրված հանդիպմանը, այն կարծիքն է հայտնել, թե «առայժմ վաղ է խոսել որոշումների մասին, բայց սա արդեն առաջընթաց շարժում է»: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի, նա նշել է, որ Ռուսաստանը «մեծ շահագրգռություն» հանդես բերեց «Կովկասում անվտանգություն եւ համագործակցություն ապահովելու խնդրում»: Այս նպատակին հասնելու համար, նրա կարծիքով, անհրաժեշտ է, առաջին հերթին, «վերացնել հակամարտությունը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ»: «Ես հանդիպումը համարում եմ շատ օգտակար, բայց սա մեր հետագա փոխգործակցության սկիզբն է», ընդգծել է Ադրբեջանի նախագահը:

Վաֆա Գուլուզադեն այժմ հավատո՞ւմ է Ռուսաստանին

ԲԱԹՈՒՄ, 25 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Նախկին պետքարտուղարն արտահայտվել է այն ոգով, որ դարաբաղյան հակամարտության կարգավորմանը Ռուսաստանի կոնստրուկտիվ մասնակցությունը կարող է դրականորեն անդրադառնալ ամբողջ հիմնախնդրի կարգավորման վրա: «Այս տարածաշրջանում ամբողջ Կովկասը գտնվում է Ռուսաստանի ազդեցության ներքո: Եթե Ռուսաստանը կոնկրետ քայլեր չձեռնարկի, ապա հազիվ թե մոտ ժամանակներս հնարավոր կլինի լուծել այդ խնդիրը», ընդգծել է Վ. Գուլուզադեն BBC-ի թղթակցի հետ ունեցած հարցազրույցի ժամանակ:

Ըստ «Բիլիք դունյասի» գործակալության, դա ինչ-որ նոր բան է: Մի աղբյուր, որը մոտիկից է ճանաչում Վ. Գուլուզադեին (վերջինս այժմ ներկայանում է որպես անկախ քաղաքականագետ), ենթադրում է, որ բանակցային գործընթացի նկատմամբ մոտեցումների նոր նրբերանգները հարուցված են քաղաքական առաջնությունների վերագնահատմամբ: Նա պարզապես հնչեցնում է որոշակի տեսակետ, որը թելադրված է փոփոխված իրավիճակով պայմանավորված գործելակերպով:

Վրաստանն ու Ադրբեջանը լեզու չեն գտնում նավթի տարանցման սակագների վերաբերյալ

ԹԲԻԼԻՍԻ, 25 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅՈՆ ՏԱՊՈՆ: Ադրբեջանի եւ Վրաստանի ներկայացուցիչները փետրվարի սկզբին եւս մեկ հանդիպում կունենան Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի շինարարության նախագծի առնչությամբ: Նման որոշում է ընդունվել Անկարայում այդ հարցի վերաբերյալ բանակցությունների հերթական փուլի ավարտից հետո: Հիմնական ուշադրությունը Անկարայում կայացած բանակցություններում հատկացվել է Բաքու-Ջեյհան առագա նավթատարի՝ անվտանգության ապահովման, շրջակա միջավայրի պաշտպանության եւ կատարյալ «սեւ ոսկու» տարանցման սակագների հարցերին: Մայրուղու շինարարության նախագծի իրականացումը ծրագրվում էր ծեռնարկել 2000 թ. հունվարի 1-ից: Դրա համար խոչընդոտ դարձան տարածայնությունները Ադրբեջանի եւ Վրաստանի միջեւ տարանցման սակագների հարցում եւ նավթի 2-3 տոկոսը ստանալու վերջինիս պահանջը, որ պոմպամղվելու է իր տարածով:

Աթենքը ձգտում է «նոր դարագլուխ» բացել հունա-թուրքական հարաբերություններում

ԱԹԵՆՔ, 25 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հունա-թուրքական մերձեցումը «լիովին դրական» է եւ խարսխվում է «կայուն հիմքի վրա»: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, մեկնաբանելով Հունաստանի արտգործնախարարության ղեկավար Գեորգիոս Պապանդրեուի Թուրքիա կատարած պաշտոնական այցի արդյունքները այս մասին երկուշաբթի օրն այստեղ հայտարարել է Հունաստանի կառավարության պաշտոնական ներկայացուցիչ Դիմիտրիս Ռեպասը: Նա ընդգծել է, որ Հունաստանը պետք է իր ավանդը «ներդնի հունա-թուրքական հարաբերություններում նոր դարագլխի ստեղծման հարցում՝ ապահովելով իր ազգային շահերն ու ինքնիշխան իրավունքները»:

«Ոչ ոք պատրանքներ չի տածում, թե Թուրքիան փոխել է արտաքին քաղաքականությունը, նշել է Դիմիտրիս Ռեպասը: Բայց, մյուս կողմից, մենք չենք կարող չտեսնել այն փաստը, որ Հունաստանի եւ Թուրքիայի միջեւ հարաբերություններում ստեղծվել է մի այլ, ավելի բարենպաստ կլիմա, եւ դա առաջընթաց է, քանի որ լավ նախադրյալ է հունա-թուրքական հարաբերությունների հետագա նորմալացման համար»:

Չեչնիայում վիրավորվել է գեներալ Կազանցեւը

ՄՈՍԿՎԱ, 25 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Օդադեսանտային զորքերի (ՕԴԶ) չորս սպա, ինչպես նաեւ Ռուսաստանի ՕԴԶ-ի շտաբի պետի տեղակալ գեներալ-մայոր Վլադիմիր Կազանցեւը, որոնք գտնվում էին Մի-8 ուղղաթիռում, զանազան վնասվածքներ ու վերքեր են ստացել Չեչնիայի Վեդենոյի շրջանում օդանավի վթարային վայրէջքի ժամանակ: Այդ մասին ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին այսօր հայտնել են ՌԴ ՕԴԶ-ի հրամանատարի մամուլի ծառայությունում: Բոլոր տուժածները տեղափոխվել են հիվանդանոց:

ARMENTEL

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արմենտել ՀՁ ՓԲԸ տեղեկացնում է, որ ավարտված են թիվ 55/57 ԱՀԿ-ի նոր թվային կայանից վերամիացման աշխատանքները: Արդեն պատրաստ է Սարի-թաղ թաղամասի բաժանորդային ցանցը, ուստի Սարի-թաղի այն բնակիչները, ովքեր ցանկանում են հեռախոս տեղադրել, հրավիրվում են 55/57 ԱՀԿ-ի բաժանորդների սպասարկման բաժին: Չարենցի 76 հասցեով, հեռախոսների տեղադրումը ձեւակերպելու համար: Ձեզ անհրաժեշտ է ներկայացնել անձնագիր, բնակելի տարածքի նկատմամբ ձեր իրավունքները հաստատող փաստաթղթեր եւ վճարել հեռախոսի տեղադրման միանվագ ծառայության վարձ՝ 24 հազար դրամ:

ԱՐՄԵՆՏԵԼ ՀՁ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ
ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ARMENTEL

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արմենտել ՀՁ ՓԲԸ տեղեկացնում է, որ ավարտված են թիվ 39 ԱՀԿ-ի նոր թվային կայանից վերամիացման եւ Երեւանի Հյուսիս-արեւմտյան Գ-3 թաղամասի բնակելի շենքերի հեռախոսաֆիկացման աշխատանքները: Գ-3 թաղամասի այն բնակիչները, ովքեր ցանկանում են հեռախոս տեղադրել, հրավիրվում են 34, 35, 39 ԱՀԿ-ների բաժանորդների սպասարկման բաժին: Բաշինջաղյան 177 հասցեով, հեռախոսների տեղադրումը ձեւակերպելու համար: Ձեզ անհրաժեշտ է ներկայացնել անձնագիր, բնակելի տարածքի նկատմամբ Ձեր իրավունքները հաստատող փաստաթղթեր եւ վճարել հեռախոսի տեղադրման միանվագ ծառայության վարձ՝ 24 հազար դրամ:

ԱՐՄԵՆՏԵԼ ՀՁ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ
ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հայտարարություն

Շտաբ վաճառվում է 3 սենյականոց (96 մ, եվրանորոգված) բնակարան քաղաքի կենտրոնում:

Հեռախոս՝ 236897

ՀԵՌՈՒՏԱՍԱՏԵՍԱՐԱՆ

26 հունվար

9.00 Հայլուր
9.20 Հեռուստասերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
10.20 Մամուլի կրոնակ
10.30 Հեռուստասերիալ «Ռեյնի մանիֆեստը»
11.00 Գ/Ֆ «Փղերի տիրակալը»
11.40 Մուլտֆիլմ «Անտառային ճամփորդները»
13.00 Հայլուր
13.20 Ռուբիկոն+
17.00 Հայլուր
17.20 Մուլտֆիլմ «Ծանոթ Բոմբեյից»
17.30 Այսօր Հնդկաստանի Հանրապետության օրն է
18.00 Հեռուստասերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
19.10 «Առողջ» լոտո
19.50 Ռուբիկոն
20.25 Արտակարգ ալիք
20.35 Տունտունիկ
21.00 Հայլուր
21.40 Պրեմիերա
21.50 Եւ եղիցի լույս
22.00 Գ/Ֆ «Ռաժդոր ակադեմիան»
23.40 Հայլուր
00.00 Կենսգիտերային ճեռքնքաց
01.00 Ռուբիկոն+

Պրոմեթեւս

9.05 Վաղ առավոտյան
10.00 Մուլտֆիլմ
10.20 Ծանոթ-անծանոթը
10.40 «Պուլ-Պուլ»
11.10 «Սենյակ»
11.50, 18.05, 20.30, 23.45 Լուրեր
18.20 Մուլտֆիլմ
19.45 Հայկական ժողովրդական հանդերգ
19.05 Սերիալ «Օլիվ ամոցը» (2 դ մաս)
20.00 Երաժշտական ծրագիր «Սոլի բանալի»
21.00 Սերիալ «Սոլ Ֆլանդերս» (1-ին մաս)
21.50 «Սոսկվան եւ ընկ.»
22.30 Տեսաֆիլմի պրեմիերա «Հայաստան, երկիր դրախտավայր»
22.55 Ուշ երեկոյան

9.00 Տոմար
11.00 Ավետա (կրկնություն)
11.20 Սամարեզ (կրկնություն)
19.00 Չոչիկ
19.30, 21.30, 23.30 Սուրհանդակ
19.50 Մամուլի խոսնակ
20.00 Գիսաստղեր
20.30 Կամ... կամ
21.15 Սերունդ
21.50 Գ/Ֆ «Ջիլլանը ծննդյան օրը»
24.00 Զոր ժամ
0.05 Մութ սենյակ
0.30 Ֆատոն
1.00 Գ/Ֆ «Քաղաքացիական հայց» (վարտին Սուրհանդակ)

7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Քնքուշ թույն»
16.00 Նորություններ
16.20 Մուլտսերիալ «Ուրվականներ որսացողները»
16.45 Հրաշալի ընկերախումբ
17.05 Ջունգլիների կանչը
17.30 Մինչեւ 16 եւ բարձր
18.00 Սերիալ «Քնքուշ թույն»
19.00 Նորություններ
19.25 Դիմակներ-շոու
19.55 Մարդը եւ օրենքը
20.50 Սերիալ «Տոկուն աղջիկները»
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
23.00 Գ/Ֆ «Երկակի խաբեություն» (դերերում Դ. Հոֆեր, Ռ. Քերադայ. ԱՄՆ, 1991 թ.)
01.00 Նորություններ
01.15 Ֆուտբոլ. համագործակցության գավաթ 2000
03.00 Սերիալ «Ուրբաթ, 13-ին»

7.30-10.20 Բարի լույս, Ռուսաստան
8.00, 9.00, 10.00 Լուրեր
9.15 Հեռուստաեթերային հատուկ մարտական ստորաբաժանում. հերթապահ բաժանումներ
10.20 Քվանտային բժշկագիտություն
10.30 Հեռուստահանդես «Արենա սպորտ»
11.00 Հոմեոպաթիա եւ առողջություն
11.10 Սերիալ «Գնչուհին»
11.55 Մուլտֆիլմ «Ուրախ կարուսել»
12.05 Սերիալ «Մեր գաղտնիքի ամառը»
13.00 Իմ XX դարը
13.25 Հեռուստաեթերային հատուկ մարտական ստորաբաժանում
13.50 Հոմեոպաթիա եւ առողջություն
14.00, 18.00, 20.00, 22.00, 02.00 Լուրեր
14.25 Հեռուստահանդես «Կանանց խաղ»
15.10 Սերիալ «Անտոնելա»
16.05 Սերիալ «Վայրի հրեշակը»
17.00 Խանութ բազմոցի վրա
17.20 Բնական լուսու
17.30 Մուլտսերիալ «Գաղտնի գործակալները»
18.20 Աստղակ
19.05 Սերիալ «Լոս Անջելեսի տարը 2»
20.30 Սերիալ «Պետերբուրգյան գաղտնիքները»
21.25 Ինձ հեզ ոեժիսոր
22.45 Կինոյի ժամ. Ձեռի Չանը «Ոչխարական պատմություն 2» ֆիլմում
00.35 Թատրոն+TV
01.45 Հեռուստաեթերային հատուկ մարտական ստորաբաժանում. հերթապահ բաժանումներ
02.20 Թեժ տասնյակ
03.15 Խանութ բազմոցի վրա

ՍՓՅՈՒՌ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Հեռ. 590000 • http://www.spyur.am

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան. Երեւան-23, Արշակունեաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Պատվեր 1186. Տպաքանակը՝ 4000. Ստորագրված է տպագրության՝ 25.01.2000. Գինը 100 դրամ